

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Հ. 93 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐ




ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
ԱՆԳԻՆ ՔԱԶԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ



ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



Զարգացման ծրագրի իրավական հիմքերը

- ✓ ՀՀ Սահմանադրություն
- ✓ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա
- ✓ Աշխատանքային օրենսգիրք
- ✓ «Կրթության մասին» ՀՀ օրենք
- ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- ✓ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- ✓ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- ✓ Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- ✓ «ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N439-Ն որոշման մեջ
- ✓ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
- ✓ Դպրոցի կանոնադրություն
- ✓ Դպրոցի ներքին իրավական ակտեր
- ✓ Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ կարգեր

Զարգացման ծրագիրը և իրականացման ժամանակահատվածը

Դպրոցի զարգացման ծրագրը նախնական աշխատանքային փաստաթուղթ է՝ հիմնված դպրոցի ներկայիս վիճակի վերլուծության, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած հանրակրթության զարգացման առաջնահերթությունների, դպրոցի համակազմի և համայնքի կարիքների բացահայտման, նորամուծությունների ներդրման վրա, ապագայի ցանկալի տեսլականին հասնելու ակնկալվող արդյունքների ներկայացմամբ: Պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը՝ հիմք ընդունելով ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Կրթության զարգացման պետական ծրագրի» սահմանած դրույթները: Հայաստանում մարդկային կապիտալը դիտվում է որպես երկրի զարգացման հիմնական ռեսուրս, իսկ կրթությունը՝ մարդկային կապիտալի զարգացման որոշիչ գործոնը: Լինելով փոքր պետություն, մարդկային կապիտալի տեսանկյունից կարևորվում է յուրաքանչյուր քաղաքացին, հասարակության յուրաքանչյուր անդամ՝ որպես մարդկային կապիտալի մի մասնիկ: Կրթության զարգացման տեսլականը կառուցված է այն դիրքորոշմամբ, որ յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով, և կրթության համակարգի **առաքելությունն է** բացահայտել յուրաքանչյուր սովորողի տաղանդները և հնարավորինս զարգացնել դրանք՝ ուղղորդելով դեպի պետության ամրապնդումը և տնտեսության զարգացումը: Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ժամանակահատվածը 2023-2028 թվականներն է:

«Կրթության զարգացման պետական ծրագիրը» սահմանում է

- ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակներն ու խնդիրները
- Երկրի զարգացման առաջնահերթություններից և հանրակրթության հիմնական նպատակներից բխող բարձրակարգ կրթության ապահովումը «Մինչդեռ արագ զարգացող և փոփոխվող հասարակությունն ու տնտեսությունը նոր մարտահրավերներ են ներկայացնում կրթության համակարգին՝ թելադրելով նոր

բովանդակության, 21-րդ դարի տնտեսության և քաղաքացիական հասարակության առանցքային կարողությունների ներառման անհրաժեշտություն կրթական ծրագրերում: Առանձնակի կարևորվում են մաթեմատիկայի, բնական գիտությունների, ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների (FS&U–STEM) ոլորտներում սովորողների պատրաստվածությունը, օտար լեզուների տիրապետումը, ինչպես նաև սովորողների քննադատական, վերլուծական, նորարարական, ինքնուրույն և ստեղծագործական մտածողության զարգացումը»:

Զարգացման ծրագրի նպատակը

Պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա:

Զարգացման ծրագրի խնդիրները

- ✓ Առաջիկա 5 տարում զարգացման առաջնահերթությունների կանխորոշում և կրթության որակի բարելավում:
- ✓ Դպրոցի ներքին նորմատիվ իրավական ակտերի վերաձևակերպում այնպես, որ այն բխի ծրագրում շարադրված առաջնահերթություններից և կրթության քաղաքականության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներից :
- ✓ Բարձրակարգ և ոլորտի առաջատար մասնագետների ներգրավում՝ սովորողների շրջանում սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:
- ✓ Դպրոցում ստեղծել մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պայմաններ, արժանապատիվ վարձատրություն, հարգանքի, համագործակցության և փոխվստահության մթնոլորտ:
- ✓ Այնպիսի կրթական ծրագրերի և գործողությունների մշակում, որոնք կապահովեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը, կնպաստեն նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը, կապահովեն արդիականացված կրթական և առողջ միջավայր, որը կհամապատասխանի համայնքի կարիքներին, արդի կրթության պահանջներին, ինչպես նաև կնպաստի սովորողների էմոցիոնալ ինտելեկտի զարգացմանը, քննադատական մտածողության ձևավորմանը:

Զարգացման ծրագրի տեսլականը/առաքելությունը

Մինչև 2028թվականը դառնալ հասարակության, տնտեսության, պետության զարգացող պահանջներին համապատասխան, տեսական ու կիրառական գիտելիքներ, գործնական հմտություններ ու ժամանակակից և նորարարական կարողություններ տրամադրող առաջատար հանրակրթական դպրոցներից մեկը հանրապետությունում:

Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները

- ✓ Կձևավորեն կարողունակ քաղաքացիներ
- ✓ Երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացում՝ հիմնվելով գործող օրենսդրության վրա:
- ✓ Կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա:

- ✓ Որակյալ կրթության մատչելիության ապահովում:
- ✓ Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:
- ✓ Կապահովեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը
- ✓ Կնպաստեն նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը
- ✓ Համայնքի կարիքներին և արդի կրթության պահանջներին համապատասխան կապահովեն կրթական արդիականացված միջավայր
- ✓ Կիրացվի գործող օրենսդրության հիման վրա երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքը
- ✓ Կապահովեն կրթության գաղափարախոսական հենք՝ հենված ազգային պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա
- ✓ Կապահովեն որակյալ կրթության մատչելիություն
- ✓ Կընձեռեն կրթության տարբեր ձևաչափերի ընտրության հնարավորություններ
- ✓ Կապահովեն սովորողների ստեղծարար մտքի զարգացում կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով
- ✓ Կառաջացնեն ազգային արժանապատվության բարձր գիտակցություն, ազգային արժեքների կարևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն
- ✓ Կօգնեն ստեղծել ինտեգրված սոցիալական միջավայր և ունենալ իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում ունեցող քաղաքացիներ:

Ծրագրի վերջնական նպատակն է.

Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված ՀՀ զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին, կյանքի բոլոր փուլերում, հնարավորություն է տալիս ստանալ իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը: Սույն վերջնական նպատակի իրականացման համար սահմանվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները.

- ✓ համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում, որը յուրաքանչյուր սովորողի համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները,
- ✓ կրթության արդյունավետության բարձրացում, ինչը կապահովի ռեսուրսի / ներառյալ մարդկային/ առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, , համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում,
- ✓ կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում, որը խարսխված է լինելու միջազգային կրթական տիրույթում և համակարգերում հայկական կրթական համակարգի ինտեգրմանը: Ծրագրի հիմքում դրվել են հետևյալ արժեքային և գործառնական սկզբունքները

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

- ✓ Պետական բյուջե
- ✓ Արտաբյուջետային միջոցներ
- ✓ Դրամաշնորհներ
- ✓ Բարերարներ և նվիրատուներ
- ✓ Շրջանավարտներ

Զարգացման ծրագրի հիմքում դրվող սկզբունքները

- ✓ սովորողակենտրոն՝ յուրաքանչյուր որոշում կայացնելիս
- ✓ դպրոցի ինքնավարության և հանրային հաշվետվողականության ու թափանցիկության հավասարակշռում
- ✓ կրթական գործընթացի կազմակերպման մեջ բոլոր շահակիցների և շահառուների պատասխանատվության առկայություն, նրանց հանդեպ վստահություն
- ✓ ներառականություն և մասնակցայնություն՝ հասարակության բոլոր խավերի ընդգրկում ծրագրի մշակման և իրագործման ընթացքում: Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի փոխադարձ կապի գործուն և թափանցիկ ներդրմամբ հնարավորության ընձեռում, ներդրում ունենալու որոշումների կայացման, ծառայությունների մատուցման և արդյունքների գնահատման գործընթացում:
- ✓ Կրթության հասանելիությանը, սոցիալական պաշտպանությանն ու աղքատության հաղթահարման ապահովում:
- ✓ Ազգային և համամարդկային արժեքների համադրում՝ եվրոպական և տարածաշրջանային կրթական ինտեգրացիոն գործընթացներում՝ ազգային շահերի, կրթական առաջադեմ ավանդույթների և նվաճումների պահպանմամբ ու զարգացմամբ:
- ✓ Կրթության գործընթացում հավասարության ապահովումը համարել կրթական քաղաքականության անկյունաքարային սկզբունք:
- ✓ Արտերկրի հայկական կրթօջախների և համայնքային կառույցների հետ շարունակական երկխոսության ապահովում:
- ✓ Կանաչ կրթության միջոցով շրջակա միջավայրի կայունության ապահովում՝ մանկավարժներին սովորողներին, ծնողական համայնքին կանաչ գործարքի վերաբերյալ իրազեկելու և ներգրավելու համար:

Զարգացման ծրագրի իրականացնողներ

Դպրոցի համակազմ՝ դպրոցի շահառուների հետ համագործակցությամբ:

Զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմները

Ծրագրի իրականացման գործընթացը վերահսկվելու է սույն ծրագրի մշակված միջոցառումների միջոցով, որոնք պարբերաբար կարող են փոխվել և հարստացվել: Վերահսկողության միջոցով իրականացվելու է հաստատության արտաքին և ներքին արդյունավետության գնահատում: Վերահսկողությունը իրականացվելու է այն հավանության արժանացրած կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Զարգացման ծրագրի հեղինակ՝ Անգին Հովսեփյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Ծրագրի հեղինակ	Անգին Քաջիկի Հովսեփյան
Իրականացնող	Դպրոցի անձնակազմ
Ֆինանսավորման աղբյուրներ	Պետական բյուջե, հովանավորներ, այլ աղբյուրներ
Դպրոցի կոնտակտային տվյալներ	Երևանի Աշոտ Մանուկյանի անվան թիվ 93 միջնակարգ դպրոց Հասցե՝ Դավթաշեն, 5-րդ փողոց Հեռ. +374-10-363 183 Էլհասցե. dproc93@mail.ru

Դպրոցի անվանումը	Երևանի Աշոտ Մանուկյանի անվան թիվ 93 միջնակարգ դպրոց շահույթ չհետապնդող, իրավական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն	
Կրթության աստիճանները (դպրոցն իրավունք ունի իրականացնելու կրթական հետևյալ ծրագրերը)	Հանրակրթական տարրական	Սահմանային տեղեր
	Հանրակրթական հիմնական	Ընդ. 10 դաս. 271 աշակերտ Լիցենզիայով նախ. տեղ.360
	Հանրակրթական միջնակարգ	Ընդ. 11դաս. 334 աշակերտ Լիցենզիայով նախ. տեղ.450 Ընդ. 7 դաս. 147 աշակերտ Լիցենզիայով նախ. տեղ.160

Դպրոցի տեխնիկական նկարագիրը	Եռահարկ, տիպային կառույց՝ • տեղային (լոկալ) ջեռուցման համակարգով, • բացօթյա մարզահրապարակով	Հիմնադրման տարեթիվ - 1939
		Նոր շենքում - 1978
Իրավաբանական անձանց պետական ռեգիստր	Գրանցման համարը	271.210.02474
	Գրանցման ամսաթիվը	2003-01-24
	Գործունեության ժամակետ	Անժամկետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագիրը այն հիմնարար փաստաթուղթն է, որի վրա խարսխվում է դպրոցի առաջիկա հինգ տարիների կրթական և դաստիարակչական գործունեությունը: Ջարգացման ծրագիրը ձևակերպում է առաջիկա հինգ տարիների ռազմավարությունը, ներառյալ այն նպատակներն ու խնդիրները, որոնք նախանշում են զարգացման հիմնական ուղիները, դրանց իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը, ինչպես նաև այն ռեսուրսային հենքը, որով պայմանավորված է ծրագրի արդյունավետ իրականացումը:

2023-2028թթ. զարգացման ծրագիրը մշակվել է համապարփակ վերլուծության արդյունքում՝ վերջին մի քանի տարիների կտրվածքով, ինչպես նաև կրթության ոլորտում այս պահին իրականացվող արմատական փոփոխությունների հիմնական ուղենիշերի հիման վրա, որոնց արդյունքում վերանայվելու է մինչ այժմ գոյություն ունեցող կրթության պարադիգմը՝ շեշտը դնելով ստեղծագործող մարդու և ապագա քաղաքացու կրթության և դաստիարակության վրա: Ծրագրի նպատակներն ու խնդիրները ձևակերպվել են՝ հիմնվելով հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման հիմնական երկու բաղադրիչների վրա.

- ✓ Ուսումնական բնագավառների և կրթության բովանդակության բաղադրիչները,
- ✓ Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները:

Ծրագիրը մշակելիս իրականացվել են ներկայացուցչական հարցումներ Երևանի Աշոտ Մանուկյանի անվան միջնակարգ դպրոցում մի շարք ծնողների և աշակերտների շրջանում, որի արդյունքները ներառվել են զարգացման ծրագրի տարբեր հատվածներում: Մշակման ընթացքում

խորհրդատվական հանդիպումներ են տեղի ունեցել ոլորտի հայտնի մասնագետների, փորձագետների կառավարման խորհրդի անդամների, շրջանավարտների, ինչպես նաև համայնքի այլ դերակատարների հետ՝ բացահայտելու լրացուցիչ կարիքները և կրթության ժամանակակից միտումները: Ծրագրի մշակման ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման քննարկումներ, կազմվել են հարցաթերթիկներ, վեր են հանվել որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներին, ռիսկերի արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրները, որի արդյունքում կատարվել են համալիր վերլուծություններ և առաջադրվել են հնարավոր լուծումներ և գործողություններ:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի շենքային պայմաններ.

Առկա իրավիճակ. Երևանի Աշոտ Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1939 թվականին՝ Դավիթաշեն գյուղում: 1978 թվականին դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք, որը բաղկացած է վեց մասնաշենքից, որից գլխավորը եռահարկ է մնացած հինգը երկհարկանի, ունի վեց մուտք և 2 000 մ/ք կանաչապատ տարածք:

Ուսումնական գործընթացը հիմնականում կազմակերպվում է 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասնաշենքերում և 6-րդ մասնաշենքի մի մասում: 7-րդ մասնաշենքը տված է վարձակալության:

1998 թվականին հ.93 միջնակարգ դպրոցը անվանակոչվել է դպրոցի սան, «Մասունցի Դավիթ» կամավորական ջոկատի հրամանատար, արցախյան հերոսամարտի մասնակից Աշոտ Մանուկյանի անունով:

Դպրոցում գործում է Ա. Մանուկյանի անվան թանգարան: Դպրոցում կա երեխաների ձեռքի աշխատանքների թանգարան:

Մեր դպրոցի տարեգրության ամենափառավոր էջը 44-օրյա պատերազմում մեր աշակերտ-զինվորների ունեցած մասնակցությունն է, ովքեր պատվով են կատարել իրենց պարտքը հայրենիքի առջև: Ցավոք նրանցից չորսը անմահացել են իրենց կյանքը նվիրելով մատաղ սերնդին: Հերոսների սխրանքները փառաբանող դասասենյակ է անվանակոչվել ի նշան նրանց անմահ գործի և օրինակ՝ իրենցից հետո եկող հայրողիների:

Վերջին տարիներին դպրոցը վերանորոգվել է /մասամբ/ ՀՀ քաղաքաշինության նախարարության միջոցներով, որի արդյունքում բոլոր մասնաշենքերն ունեն թեք տանիք, ունի նաև ջրահեռացման համակարգ:

Առկա խնդիրներ. Դպրոցն ընդհանուր առմամբ ունի վերանորոգման կարիք: Այն հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար՝ բացակայում են սովորողների անվտանգ տեղաշարժն ապահովող պայմանները, թեք հարթակները, հատուկ վերելակները, լայն դռները և այլն:

Անվտանգության պայմաններ

Առկա իրավիճակ. Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:

Դպրոցի տարածքը մաքուր է: Աղբահանությունը կատարվում է Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչության հսկողությամբ: Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ միջատների, կրծողների / ախտահանման, կանխարգելման/ դեմ:

Առկա խնդիրները: Դպրոցի բակը ասֆալտապատված է և ցանկապատված սակայն գտնվում են ոչ բարվոք վիճակում և ունեն վերանորոգման կարիք:

Ուսումնական միջավայր.

Առկա իրավիճակ. Մասնաշենքերից առաջինում տեղակայված է պահակատունը, տնօրենի առանձնասենյակը, ուսուցիչների աշխատանքի և հանգստի սենյակը, հանդիսությունների դահլիճը, մարզադահլիճները՝ 2 հանդերձարաններով, զինապահեստը, ռազմագիտության կաբինետը, առկա է նաև 35 առարկայական դասասենյակ, որոնցից յուրաքայրուրում կարող են տեղավորվել մինչև 35 աշակերտ:

Առկա խնդիրներ. Ուսումնական գործընթացը հիմնականում կազմակերպվում է 1-ինից 5-րդ մասնաշենքերում, 6-րդ մասնաշենքը գտնվում է անմխիթար վիճակում ունի հիմնավերանորոգման կարիք, նիստերի դահլիճը ունի ևս վերանորոգման և գույքի ձեռքբերման կարիք: Մարզասրահին կից հանդերձարանը չի համապատասխանում ժամանակակից ստանդարտներին, չկան պահարաններ լվացվելու հարմարություններ:

Բացակայում է լուսային համակարգը:

Դպրոցում չկան ռոբոտաշինության, ծրագրավորման, պատմության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, երաժշտության սենյակները, տեխնոլոգիա առարկայի դասասենյակ՝ արհեստանոց:

Դպրոցը չունի ճաշարան սակայն ունի բուֆետ, որը չի շահագործվում:

Դրսի տարածքում գտնվում է լոկալ ջեռուցման կաթսայատունը, որը նույնպես ունի վերանորոգման կարիք:

Դպրոցի տեղեկատվական հագեցվածությունը.

Առկա իրավիճակ. Դպրոցում առկա է միայն մեկ համակարգչային սենյակ՝ ոչ համապատասխան գույքով, համակարգիչները հին են և ոչ բավարար քանակի: Առկա է ընդամենը երկու էլեկտրոնային գրատախտակ, այնինչ, ժամանակակից տեխնոլոգիական տեխնոլոգիաների գերարագ զարգացող աշխարհում, համակարգչային բազային գիտելիքների առկայությունը ծայրահեղ անհրաժեշտություն է: Դպրոցն ունի 14000 անուն գրականությամբ գրադարան:

Առկա խնդիրներ. Դպրոցում անհրաժեշտ է ավելացնել էլեկտրոնային գրականություն, ինչպես նաև առարկայական դասասենյակները անհրաժեշտ է համալրել էլեկտրոնային գրատախտակով ինչպես նաև առնվազն մեկական համակարգչով:

Ուսումնական գործընթացի մասնակիցները.

Առկա իրավիճակ. Դպրոցում աշխատում են 43 ուսուցիչ, որոնք բոլորը ունեն բարձրագույն կրթություն: Ուսուցիչներից 4-ը մասնակցել են կամավոր ատեստավորմանն, 2 ուսուցիչ ունեն տարակարգ:

Դպրոցի աշակերտների ընդհանուր թիվը 752 է :

Առկա խնդիրներ. Վերջին տարիների ընթացքում ուսուցիչների թիվը կրճատվել է և դպրոցն ունի մանկավարժների կարիք մասնավորապես ներկա պահին դպրոցն ունի պատմության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և ՆԶՊ առարկաների մասնագետների կարիք:

Ֆինանսական միջոցներ.

Առկա իրավիճակ. Դպրոցի միջոցները գոյանում են պետական բյուջեի միջոցների և լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման արդյունքում:

Առկա խնդիրներ. լրացուցիչ կրթական ծառայությունների վճարը սահմանված է ամսեկան 5000 ՀՀ դրամ:

Կրթության որակ.

Առկա իրավիճակ. Դպրոցում դասավանդում են բարձր հեղինակություն ունեցող արհեստավարժ մանկավարժներ:

Առկա խնդիրներ. Ուսումնական միջավայրի ոչ բավարար լինելու պատճառով՝ ուսուցիչները հնարավորություն չեն ունենում ուսուցումը կազմակերպել առավել գործնական և կիրառելի փորձերի օրինակներով:

Աշակերտներին չի բավարարում դպրոցում անցկացվող արտաուսումնական գործընթացների՝ էքսկուրսիաների, արտագնա միջոցառումների, թանգարանների, թատրոնների, կինոյի և այլնի այցելությունների քանակը:

Նոր կարգին համաձայն, նախատեսում եմ համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ և գտնել արդի դպրոցի և ուսուցման նորովի կազմակերպման համար պահանջվող ձևեր, միջոցներ, բարերարներ, ծրագրեր, միջոցառումներ և այլն:

Հ/Հ	Շինությունների հարմարությունների անվանում	Քանակը	Մակերեսը (քմ)	Ծավալը (խմ)	Պահանջարկ վարչատնտեսական համակարգողին
1	Շենք(եռահարկ և երկհարկ) ընդհանուր մակերեսը	1	11012.3		
2	Մասնաշենքեր	7			
3	Վարձակալությամբ տրված տարածք		386,4		Շարունակելի
4	Դասարաններ	13	738		լոկալ
5	Առարկայական դասասենյակներ	34	2138		վերանորոգում
6	Լաբորատորիաներ	3	130		հիմնանորոգում
7	Արհեստանոցներ	1	450		հիմնանորոգում
8	Մարզադահլիճներ	1	55		հարդարում
9	Գրադարան (ներ)	1	30		Վերանորոգում ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով նաև էլեկտրոնային գրադարան
10	Ապաստարան	1			Ժամանակակից բազա ապահովել
11	Բուժկետ	1	250		Կահավորել անհրաժեշտ գույքով
12	Հրաձգարան (ներ)	2	40		հիմնանորոգում
13	Զուգարան (ներ)	14	208		վերանորոգում
14	Տեխնիկական նշանակության այլ սենյակներ/ համակարգչային/	2	126		Վերանորոգում ժամանակակից պահանջներին համապատասխան և համալրել ժամանակակից գույքով
15	Մարզահրապարակ(ներ)	2	200		Բարեկարգում

16	Հանրակացարան (ներ)	0	0		
17	Ննջասենյակներ	0	0		
18	Համակարգիչներ	—			Վերանորոգում և կահավորել ժամանակակից պահանջներին համապատասխանան յուրաքանչյուր դասասենյակ ապահովվել առնվազն մեկ համակարգչով
19	Հեռախոսներ	2			Ներքին հեռախոսային ցանցի ներդրում
20	Ջեռուցվող տարածքներ				
21	Ջեռուցման տեսակը	լոկալ	7000		
22	Ջեռուցման օրեր	7			
23	Տրանսպորտային միջոցներ	0	-		
24	Լոգապատ սովորողներ	—			
25	Երթևեկող սովորողներ	—			
26	Գիշերող սովորողներ	—			
27	Սրգատու այգիներ	0	0		
28	Դեկորատիվ բուսական այլ այգիներ	0	0		
29	Շենքի մաքրվող տարածքներ		11012.3		
30	Բակի մաքրվող մակերեսներ		21409		
31	Սան. հանգույցների մաքրվող մակերեսներ	9	139		վերանորոգել

Ուժեղ կողմեր

1. Հաստատությունում գործում է լոկալ ջեռուցման համակարգ
2. Ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ
3. Համակարգչային սենյակի առկայություն
4. «ՆԶՊ» առարկայի դասասենյակի առկայություն
5. Սանհանգույցների առկայություն
6. Հաշվապահի, գործավարի և օպերատորի առանձնացված սենյակների առկայություն
7. Մարզադահլիճի առկայություն
8. Ճաշարանի առկայություն
9. Գրադարանի առկայություն
10. Շախմատի դասասենյակի առկայություն

Թույլ կողմեր

1. Ուսումնանյութական բազայի ոչ բավարար հագեցվածություն
2. Քարտեզների, պաստառների, գրքերի բացակայություն
3. Ճաշարանի անբարվոք վիճակ
4. Լաբորատորիաների բացակայություն
5. Հանդերձարանի բացակայություն
6. «ՆԶՊ» առարկայի դասասենյակի հագեցվածություն բացակայություն
7. Նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն
8. Գրադարանի տարածքի, պատշաճ միջավայրի բացակայություն

11. Մասամբ կահավորված ապաստարանի առկայություն

12. Դպրոցի Ֆիզկուլտդահլիճի բավարար շենքային և նյութատեխնիկական բազայի, մարդկային ռեսուրսների պատրաստականության շնորհիվ ապահովվում են ֆիզկուլտուրայի բարձր ցուցանիշներ

13. Հանդիսությունների դահլիճի շենքային պայմանները բավարար են

9. Ուսուցչանոցի առկայություն բացակայություն

10. Աշխարհագրություն, կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա առարկաների լաբարատորիաների և կահավորանքի բացակայություն

11. Ինֆորմատիկայի կաբինետը հագեցած չէ կրթական նոր տեղեկատվական տեխնոլոգիաներով

12. ՆԶՊ կաբինետը և զինանոցը հագեցված չէ բավարար քանակի նյութատեխնիկական բազայով



**Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային
ռեսուրսներին և հնարավորություններին**

Ենթակառուցվածքների	հնարավորությունները	Փաստացի վիճակը
ջրամատակարարում	շուրջօրյա	լավ
Կոյուղացում	կենտրոնացված	լավ
էլեկտրամատակարարում	շուրջօրյա	լավ
գազամատակարարում	ջեռուցման սեզոնին	լավ
Ջեռուցում	Անհատական հնոցի միջոցով	բավարար լավ
սանհանգույցներ	10	բավարար
Ինտերնետային կապ	բավարար՝ անհատական կրիչի, վայ-ֆայի, լարերի միջոցով	բավարար
Ուսումնական նպատակով ֆիզիկական հարմարեցումներ		
Նիստերի դահլիճ	1	լավ
Ճաշարան	1	բավարար
Բուժկետ	1	բավարար
Գրադարան	1	բավարար
Արհեստանոց	0	Բացակայում է
Առանձնասենյակ	0	
Համակարգչային կաբինետ	1	բավարար
Տեխնոլոգիայի կաբինետ	0	
ՆՁՊ -ի կաբինետ	1	բավարար
Մեծ մարզադահլիճ	1	Լավ
Փոքր մարզադահլիճ	1	լավ
Լաբորատորիա	0	
Դասասենյակ	40	բավարար
Շախմատի կաբինետ	0	
Ապաստարան	1	բավարար
Նկուղ	1	բավարար

Մարդկային ռեսուրսներ

Տնօրեն	1
Փոխ. ուս. գծով	1
Փոխ. դաս. գծով	1
Փոխ. տնտ գծով	1
կազմակերպիչ	1
Ուսուցիչներ	24
Դասվար	11
Ուս. օգն.	2

Հոգեբան	1
Հաշվապահ	1
Գործավար	1
Գրադարանավար	1
Բանվոր/ այգեպան	1
Հավաքարար	4
Պահակ	4
Դպրոցի խորհրդի անդամներ	9
Աշակերտական խորհրդի անդամներ	15
Աշխատողների ընդհանուր թիվ	58
Աշակերտներ	752

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացումը մշտապես կախված է դպրոցի տնօրենի և կառավարման, խորհրդակցական մարմինների միջև ճիշտ, առողջ, մշտական սերտ համագործակցությունից, որի գլխավոր նպատակն է ունենալ ժամանակի և պետական հանրակրթական չափորոշիչներին համապատասխան առաջադեմ և լավագույն դպրոց:

Ընդլայնել խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին: Դպրոցի կառավարման գործընթացում խնդրահարույց և պրոբլեմատիկ իրավիճակների ոչ մասնակցային մոտեցումը փոխարինել կոլեգիալ որոշումներով: Մշտապես կատարելագործել տնօրենության կառավարման կարողությունները՝ ծրագրերի մշակման, ռեսուրսների ներգրավման, կոմունիկացիայի, վարչական աշխատանքի արդիականացման, արդյունավետության բարձրացման և այլ ուղղություններով:

Դպրոցի գործունեության իրականացման թույլ վերահսկողություն: Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ:

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Ա. Թորոսյան	20	20	չունի
Տնօրենի տեղակալ	Հ. Հախոյան	16	29	չունի
Տնօրենի տեղակալ	Գ. Ստեպանյան	9	27	չունի
Տնօրենի տեղակալ	Մ. Սահակյան	10	10	չունի
Տնօրենի տեղակալ	Ք. Դավթյան	1	2	չունի
Հաշվապահ	Լ. Գրիգորյան	20	20	չունի

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ. ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻՆ ՈՒ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Դպրոցում շատ կարևորվում է համագործակցությունը պետական և հասարակական տարբեր կառույցների հետ, ստեղծել միջավայր, որը խթան է սովորողների սոցիալական դրսևորումների ձևավորմանը և զարգացմանը, սոցիումին ինտեգրվելու և քաղաքացիական գիտակցություն ձևավորելու համար: Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր, բարեգործական նախաձեռնություններ: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը:

Աշակերտները ակտիվ մասնակցում են համայնքային կյանքին, աջակցում համայնքի կազմակերպված միջոցառումների անցկացմանը:

Դպրոցում կազմակերպվող բազմաթիվ ու բազմաբովանդակ միջոցառումներին ներկա են լինում մեծաթիվ ծնողներ, որոնք հիմնականում համայնքի բնակիչներ են:

Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման լիազոր մարմինների, ԿԶՆԱԿ-ի, համայնքապետարանի հետ՝ փորձելով մասնակցություն ցուցաբերել միջոցառումներին, քննարկել և լուծել նյութատեխնիկական, սանիտարահիգիենիկ և այլ կարևոր խնդիրներ օրենքի շրջանակներում:

Նախատեսում ենք ակտիվ համագործակցություն կրթամշակութային մի շարք կազմակերպությունների՝ ՀՕՖ, «Էյ Թի Փի», «Թումո», «Արմաթ», «Զանգակ» գրատան, «Տաթև» գիտակրթական համալիրի, Մոսկվայի տան «Россотрудничество», «Дом русской книги» հետ:


SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

<u>Ուժեղ Կողմեր</u>	<u>ԹուօՑ Կողմեր</u>
<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցը ժամանակակից նորմերին համապատասխան համագործակցում է կրթության կառավարման լիազոր մարմինների հետ; ✓ Լիազորված մարմինն անշեղորեն իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը, դպրոցի գործունեության վերահսկողությունը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը : ✓ Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը ✓ Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթեր և դրանք վարվում են ըստ սահմանված կարգերի: Դպրոցն ունի լրամշակված ներքին կարգապահական կանոններ՝ ինչպես աշխատակազմի, այնպես էլ ծնողների համար: ✓ Ուսումնական հաստատությունը արդյունավետ օգտագործում է գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրնակելի ձևերը և ներկայացնում կրթության կառավարման մարմիններին: ✓ Դպրոցն իր իրավասության սահմաններում մշակում է հաստատության համար անհրաժեշտ նոր նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառում աշխատանքի ընթացքում: ✓ Ուսուցիչները պատրաստակամորեն մասնակցում են կրթության կառավարման մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին / խորհրդակցություններ, սեմինարներ, հանդիպումներ/ ✓ ՏՀՏ միջոցները թույլ են տալիս ժամանակին տեղեկանալու կրթության կառավարման վերջին օրենքներին, փոփոխություններին, հրամաններին, ծրագրերին և այլն: ✓ Դպրոցում կատարվում են ներքին և արտաքին գնահատում՝ որի արդյունքները բավարար են: 	<ul style="list-style-type: none"> ✓ Չկա համագործակցություն դոնոր կազմակերպությունների հետ, որը որոշակի հարցերում կֆինանսավորի դպրոցի ուսումնական ծրագրերը. օրինակ՝ բնագիտական առարկաների լաբարատորիաների ձեռք բերման գործում: ✓ Չկան անհատ բարերարների ներդրումներ, որոնք կնպաստեն ուսումնական բազայի համալրմանը, վերը նշված շենքային հարմարությունների ստեղծմանը: ✓ Չկա համագործակցություն Արմաթ ինժեներական լաբարատորիայի հետ: ✓ Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ բացակայում է ✓ Թույլ է կապը հասարակական կազմակերպությունների հետ ✓ Սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցում համայնքի հնարավորությունների օգտագործումը, փոխադարձ ներդրումները բավարար չեն: ✓ Սոցիալապես խնդիրներ ունեցող ծնողական համայնքի բավարար փոխօգնություն չի կազմակերպվում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԻՐ
Դպրոցը ճանաչելի դարձնել որպես կրթության ոլորտում գերազանցության կենտրոն:	Լրամշակել կոմունիկացիայի/PR/ռազմավարությունը՝ քարտեզագրելով հիմնական դերակատարներին և կազմելով հստակ գործողությունների պլան:	Տպագրել և տարածել դպրոցի պատկերանիշով կրծքանշաններ, գրիչներ և այլ արքեսուարներ, որոնք կբաժանվեն ուսուցիչներին, աշակերտներին և դպրոցի հյուրերին	Դպրոցի ճանաչելիության և հեղինակության բարձրացում	Դպրոցի ճանաչելիության և հեղինակության բարձրացում	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
Կառուցել արդյունավետ հաղորդակցություն կրթության ոլորտի բոլոր դերակատարների հետ:	Նախաձեռնել երկխոսության միկրո, մեզո և մակրո մակարդակի հաղորդակցության տարբեր հարթակներ՝ ներքին և արտաքին հաղորդակցությունը բարելավելու նպատակով:	Վեբ կայքի պարբերաբար թարմացում Վեբ կայքէջը և սոցիալական հարթակները օգտագործել որպես ոլորտի նորարարությունների տարածման կարևորագույն աղբյուր և համայնքի հետ հետադարձ կապի և տեղեկատվության տարածման կարևորագույն միջոց	Տեղեկատվության արագ և ժամանակին տրամադրում	Պատասխանատու մասնագետ ուսուցիչներ	2023-2028թթ	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ



«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օրենքով սահմանված կարգով:

Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 23-ի N444 որոշման, իրականացվում է կոլեգիալ կառավարում:

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 77-րդ կետով ամրագրված է. «Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»:

Ա. Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոցում կառավարման խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահած գործառնություններին հապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում պատրաստակամորեն աջակցել բոլոր նախաձեռնություններին: Դպրոցի կառավարման խորհուրդը օրենքով նախատեսված պարբերականությամբ հրավիրում է նիստեր , որոնք նպաստում են դպրոցի արդյունավետ գործունեությանը, ապահովում համագործակցություն համայնքի հետ, քննարկում ֆինանսական և տարիֆիկացիոն հարցեր, ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահած գործառնությունները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է օգոստոսյան առաջին նիստին: Մանկխորհուրդը սովորաբար գումարվում է հիմնականում բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում ընթացիկ հարցեր: Նիստերը արձանագրվում են սահմանված կարգով:

Դպրոցի աշակերտական խորհուրդը ակտիվ գործունեություն է ծավալում և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը: **Աշակերտական խորհուրդը բաղկացած է 15 անդամներից:**

Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, նախաձեռնում և կազմակերպում թեմատիկ միջոցառումներ, հանդիպումներ ճանաչողական այցեր, նպաստում է ներքին կարգապահական կանոնների պահպանմանը:

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս նրանց խնդիրներին: Անչափ կարևորում ենք, աշակերտների կողմից բարձրացված հարցերի խորը և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը: Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Աշակերտական խորհրդի հետագա ավելի ակտիվ գործունեության համար անչափ կարևորում ենք նրանց կողմից բարձրացվող հարցերի մանրամասն ուսումնասիրություն և մասնագիտական վերլուծություն՝ կազմակերպելով տարատեսակ քննարկումներ:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: **Ծնողական խորհուրդը կազմված է 28 անդամներից:** Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչ գումարվում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև բարդ պայմաններում, ինչպիսին է համավարակը: Նրանց հետ կապն իրականացվել է առցանց՝ սոցիալական տարբեր հարթակներում:

Կարևորելով դպրոցի խորհրդակցական մարմինների միասնական և փոխկապակցված գործունեությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում՝ որպես դպրոցի տնօրեն, պետք է կարողանալ ժամանակին և ճիշտ գնահատել նրանց աշխատանքը, և անհրաժեշտ միջոցներ

ձեռնարկել խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպել տարատեսակ քննարկումներ և սեմինարներ:

Ծնողական համայնքի հետ ունեցած իմ հանդիպումը շատ բազմաբովանդակ էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ առաջարկները պահանջում են խորքային քննարկումներ, առաջիկայում նախատեսում եմ իրականացնել յուրաքանչյուր թեմայի շուրջ մասնակցային հանդիպումներ, որպեսզի ճիշտ լուծում ունենան ներքոնշյալ բոլոր հնչեցված առաջարկները:

Ծնողների կողմից արված առաջարկներ
1. Բնագիտական առարկաների առավել կիրառական օրինակներով ուսուցում
2. Տարրական դասարաններում երկարօրյա ուսուցման արդյունավետ կազմակերպում
3. Տեխնոլոգիա ՆՁՊ առարկաների կաբինետների ստեղծում և դասավանդման բարելավում
4. Ինֆորմատիկա առարկայի ուսուցման բարելավում, համակարգիչների համալրում
5. Վճարովի կրթական ծառայությունների ավելացում նաև վճարի վերանայում
6. Ծնողկոմիտեի նախագահ ընտրելու դեպքում, մյուս ծնողների դուրս մղման բացառում՝ որպեսզի նրանք չզրկվեն նախաձեռնողական և այլ միջոցառումներում հանդես գալու հնարավորությունից
7. Միջազգային փոխանակման ծրագրերի իրականացում
8. Ծնողների ներգրավվածության մեծացում
9. Միջոցառումների քանակի ավելացում
10. Արտադպրոցական խմբակների բացում
11. Դպրոցի ֆիզիկական միջավայրի հարմարեցում ԿԱՊԿՈւ երեխաների համար
12. Ճաշարան ունենալու կարևորություն
13. Բակային տարածքի բարեկարգում և կանաչապատման իրականացում
14. Տեխնոլոգի, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն առարկաների դասասենյակների կահավորանքի առկայություն և լաբարատորիաների անհրաժեշտություն
15. Բոլոր առարկայական կաբինետների նոր և ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կահավորանքի անհրաժեշտություն

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

<u>ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ</u>	<u>ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ</u>
✓ Կուռ թիմ	✓ Առցանց
✓ Համագործակցնած փաստաթղթաշրջանառություն	փաստաթղթաշրջանառության համակարգի բացակայություն
✓ Պարտադիր հաշվետվությունների առկայություն	✓ Աշակերտների, ծնողների կողմից ներքին իրավական ակտերի ոչ բավարար իմացություն
✓ Գործառույթների հստակ տարանջատում	✓ Համագործակցային գործունեության պակաս
✓ Viber խմբերով կապ դասարանների ծնողների և դասղեկների միջև	✓ Կառավարման խորհրդի հաճախակի փոփոխություն

	✓ Ինքնուրույն նախաձեռնությունների պակաս
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ
<ul style="list-style-type: none"> ✓ Հորիզոնական կառավարման անցնելու նախադրյալներ ✓ Առավել համակարգված գործելու հնարավորություն ✓ Ծնողական խորհրդի առավել ակտիվ մասնակցություն դպրոցական կյանքին ✓ Շրջանավարտների համախմբում դպրոցի շուրջ ✓ Հասարակական և այլ բարեգործական ընկերությունների հետ համագործակցության ընդլայնում 	<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցի ինքնավարության նվազում ✓ Լիազորությունների սահմանափակում


ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ	ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ
Համագործակցային, մասնակցային սկզբունքի հիման վրա կառավարման արդյունավետության բարձրացում:	Կառավարման ներկա մոդելը դարձնել առավել մասնակցային:	Ուսումնասիրել դպրոցների կառավարման ներկա մոդելները, փորձելով տեղայնացնել լավագույն փորձը	Կառավարման լավագույն փորձի բացահայտում	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ	2023-2028թ.թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Հորիզոնական կառավարման մոդելի ներդրման նպատակով իրականացնել լիազորությունների և պատասխանատվությունների բաշխում	Հորիզոնական կառավարման մոդելի ներդրում	Տնօրեն	2023-2028թ.թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Խորհրդակցական մարմինների ծանոթացնել միջազգային առաջավոր փորձին	Կառավարման լավագույն փորձի բացահայտում	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ	2023-2028թ.թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
	Ապահովել արդյունավետ համագործակց-	Խորհրդակցական մարմինների սերտ և փոխկապակցված	Կրթության որակի բարելավում	Խորհրդակցական մարմիններ	2023-2028թ.թ.	Ֆինանսավորում չի

ցույթուն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև:	փոխհամագործակցություն (Մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ)				պահանջվում
Խրախուսել Խորհրդակցական մարմինների նախաձեռնությունները:	Մշտապես կատարելագործել տնօրենության կառավարման կարողությունները՝ ծրագրերի մշակման, ռեսուրսների ներգրավման, կոմունիկացիայի, վարչական աշխատանքի արդիականացման, արդյունավետության բարձրացման և այլ ուղղություններով	Կառավարան ժամանակակից հմտությունների տիրապետում	Տնօրեն	2023-2028թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Խրախուսել ակտիվ Նախաձեռնություններով հանդես եկողներին	Նախաձեռնությունների թվի ավելացում	Խորհրդակցական մարմիններ, աշակերտական խորհուրդ	2023-2028թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Դպրոցում TEDTalk-երի կազմակերպում	Մոտիվացիայի ավելացում՝ հաջողության պատմություններից	Տնօրեն	2023-2028թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
Ջարգացնել կառավարման և խորհրդակցական մարմինների ներկայից հմտությունները:	Կազմակերպել տարբեր սեմինարներ, վերապատրաստումներ՝ մասնակցային կառավարման մոդելը առավել արդյունավետ կիրառելու համար	Կառավարման առավել արդյունավետ մոդել	Վարչական անձնակազմ	2023-2028թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ջարգացնել մ/մ կարողությունները՝ դարձնելով դրանք	Նորարարական մեթոդներով դասավանդում	Մեթոդական միավորումներ,	2023-2028թ թ.	Պետական բյուջե, օրենքով

	բովանդակային նորարարությունների մշակման և ներդրման հարթակներ:		Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ		չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Զարգացնել աշակերտական խորհրդի կառուցվածքները	Աշակերտների ինքնուրույնության ընդլայնում	Աշակերտական խորհուրդ		Ֆինանսավորում չի պահանջվում
	Դասադեկներին համար կազմակերպել վերապատրաստումներ՝ դասարանի արդյունավետ կառավարման համար	Դասարանների արդյունավետ կառավարում և կազմակերպում	Տնօրեն	2023-2028թ.թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Խորհրդակցական քննարկումներ խորհրդակցական բոլոր մարմինների միջև՝ համատեղ գործողությունների պլան մշակելու նպատակով:	Համագործակցության ապահովում	Տնօրեն	2023-2028թ.թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
Շրջանավարտների հետ համագործակցության խթանում	Շրջանավարտների խորհրդի ձևավորում	Շրջանավարտների և դպրոցի հետ կապի պահպանում	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2028թ.թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
	Շրջանավարտների համախմբման միջոցառումների իրականացում			2023-2028թ.թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
Երկխոսության հարթակներ ստեղծել կրթության ոլորտի տարբեր շահառուներ միջև	Հասարակական և այլ բարեգործական ընկերություններ հետ համագործակցության ընդլայնում	Փորձի փոխանակում	Օրինակ՝ ՀՕՖ հիմնադրամ	2023-2028թ.թ.	Ֆինանսավորում չի պահանջվում

« Սովորական ուսուցիչը պատմում է:
 Լավ ուսուցիչը բացատրում է:
 Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս:
 Հանձարեղ ուսուցիչը ոգեշնչում է»:
 Ուիլյամ Ուորդ



Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման կարևորագույն օղակներից մեկը շարունակ ինքնակատարելագործման ձգտող և թիմային աշխատանքի պատրաստ ուսուցիչն է: Ուսուցչի բարդ և պատասխանատու ամենօրյա գործունեությունը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է.

- Պայմաններ ստեղծել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության ամենօրյա կատարելագործման համար:
- Երիտասարդ ուսուցիչների համար կազմակերպել որակյալ և գործուն օգնություն:
- Դպրոցում մանկավարժական առաջավոր փորձի փոխանակման համար կազմակերպել բաց դասեր, իրականացնել դասալսումներ և այլն:
- Շարունակել ուսուցիչների վերապատրաստումը, նպատակուղղել համակարգչային գիտելիքների և օտար լեզվի իմացության ամրապնդմանը:
- Ապահովել ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը:
- Մանկավարժական գործունեությունը նպատակաուղղել յուրաքանչյուր սովորողի՝ սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և ազգային բարձր արժեքների կարևորության ու նշանակության, դրանց կրողը լինելու գիտակցության բարձրացմանը:

Ուսուցիչը պետք է մշտապես սովորեցնի և պահանջի լինել հայրենասեր, գիտակցել սեփական տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, հարգել մարդու իրավունքները, լինել աշխատասեր, անաչառ զնահատել սեփական ուժերն ու կարողությունները:

Ուսման բարձր որակ ապահովելու առաջին նախադրյալը մանկավարժների մասնագիտական որակները զարգացնելու քաղաքականությունն է: Այս հարցում մեծ է ՀՀ կառավարության աջակցությունը: Դրա լավագույն օրինակը վերջերս ներդրված կամավորության հիմունքներով ատեստավորումն է, որը մասնագիտական կարողությունների սահմանը ճանաչելու, դրանք կատարելագործելու լավ հնարավորություն է տալիս մեր ժամանակների ուսուցչին: Մասնագիտական որակների զարգացումը ապահովելու նախաձեռնություն է տալիս նաև տարակարգի ներդրումը: Մասնագիտական որակների զարգացման ճանապարհին հաստատությունը ևս մի շարք նախաձեռնողական աշխատանքներ է տարել: Կազմակերպվել են հանդիպումներ, սեմինարներ, խորհրդատվություններ՝ ձևավորելով մասնագետների շփման, փորձի փոխանակման, մեթոդների իմացության, ՏՀՏ գործիքակազմին տիրապետելու մշակույթ: Դպրոցի բոլոր ուսուցիչները իրենց գործի իսկական նվիրյալներն են՝ համապատասխան մասնագիտական կրթությամբ, պարտաճանաչ և պատասխանատու:

Դպրոցում գործում են հետևյալ մեթոդափափորումները.

- Հայոց լեզու և գրականություն
- Օտար լեզուներ (ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն)
- Մաթեմատիկա - ինֆորմատիկա
- Բնագիտություն (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն)
- Պատմություն – աշխարհագրություն
- Տարրական կրթություն
- Ֆիզկուլտուրա-ՆՁՊ-Տեխնոլոգիա-Կերպարվեստ-Ազգային երգ ու պար մեթոդ-միավորումները:

Մեթոդափափորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի, մեթոդական ուսուցման կազմակերպումն է, դասավանդման վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի վերլուծությունը և այլն:

Մեթոդափափորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի կատարումը:

Պարբերաբար գումարվում են նիստեր, որոնք արձանագրվում են համապատասխան ձևով և համապատասխան մատյանում: Մեթոդափափորումների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հետևողական մոտեցում: Այդ նպատակով անհրաժեշտ է Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ՝ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով: Զարգացնել առարկայական մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	42	41	38	նվազում/նվազում
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	21	22	25,5 ընդ.- (920ժ)	աճ/աճ

Ուսուցիչների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	4	4	4	անփոփոխ
31-ից 40 տարեկան	11	14	13	Աճ/նվազում
41ից 50 տարեկան	10	10	10	անփոփոխ
51-ից 55 տարեկան	6	6	6	անփոփոխ
56 տարեկան և ավելի	12	12	11	անփոփոխ /նվազում

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

<u>Ուժեղ ԿՈՂՄԵՐ</u>	<u>Թուշ ԿՈՂՄԵՐ</u>
<ul style="list-style-type: none"> ✓ Մանկավարժական բանիմաց համակազմ՝ պատրաստ նորարական մարտահրավերներին և համագործակցային աշխատավոճին ✓ Համակազմը համալրված է ժամանակակից SS ոլորտը տիրապետող մանկավարժներով, ուսուցչի օգնականով ✓ Ունենք ատեստավորված համակազմ, առաջին տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ ✓ Մ/Մ համակարգված աշխատանք ✓ Լայնորեն՝ S2S գործիքակազմ կիրառող և լավագույն գործիքակազմին (Teams, Quizizz, sovorir.am, eschool.am, imdproc.am) 	<ul style="list-style-type: none"> ✓ Ուսուցչի գերծանրաբեռնվածություն ✓ Նորարարական մեթոդների կիրառման հատվածայնություն ✓ Տարակարգ ունեցող ուսուցիչների ոչ բավարար քանակ ✓ Ուսուցիչների ներքին գնահատման համակարգի բացակայություն ✓ Ինքնազարգացման տարեկան պլանի բացակայություն ✓ Դասարանի կառավարման մարտահրավերներ ✓ Խրախուսման սահմանափակ մեխանիզմներ և միջոցներ ✓ Մեթոդափոփոխումների նորարարական

<p>տիրապետող ուսուցիչներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Մանկավարժական առողջ մթնոլորտ, թիմային գործունեություն, փոխօգնության մշակույթ ✓ Ծնողների հետ կազմակերպվող համագործակցային աշխատանք ✓ Մ/Մ նախագահների կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքների մշտադիտարկում, ներքին դպրոցական վերահսկողություն, սեմինարներ, խորհրդատվություններ՝ ուղղված ուսուցիչների մասնագիտական որակի բնօրինակները և հմտությունների ձևավորմանը ✓ Ուսուցման շերտավորված և ստեղծագործ աշխատանքի առկայություն 	<p>ներուժի ոչ ամբողջական իրացում</p> <ul style="list-style-type: none"> ✓ Որոշ բանգավառներում S2S կարողությունների բարելավման կարիք ✓ Ցածր աշխատավարձեր ✓ Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ ✓ Գերծանրաբեռնված և պատասխանատու աշխատանք ✓ Միջազգային վերապատրաստումների բացակայություն ✓ Անհարկի թղթավարություն ✓ Լաբարատորիաների, սարքավորումների հագեցած սենյակների, մասնագիտական սենյակների պակաս ✓ Ստեղծագործական ներուժը լիարժեք իրացնելու հնարավորության պակաս
<p><u>ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></p> <ul style="list-style-type: none"> ✓ Մանկավարժների մասնագիտական և մանկավարժամեթոդական վերապատրաստում ✓ Ինքնազարգացման մեծ հնարավորություններ ✓ Մենթոր դպրոց դառնալու հնարավորություն ✓ Լրացուցիչ կրթական ծառայություններ 	<p><u>ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ</u></p> <ul style="list-style-type: none"> ✓ Ֆորս-մաժորային իրավիճակների առկայության դեպքում աշխատանքի առավել բարդացում ✓ Ուսուցիչների ատեստավորման կարգի դժվարություններով պայմանավորված մոտիվացիայի անկում, հիասթափություն ✓ Առաջացող փոփոխություններին դժվար ինտեգրում

Մանկավարժական համայնքի հետ ունեցած իմ հանդիպումը շատ առարկայական էր: Մանկավարժների կողմից բարձրաձայնված առաջարկները պահանջում են խորքային քնարկումներ, առաջիկայում նախատեսում եմ անցկացնել խորհրդակցություններ, որպեսզի ճիշտ լուծում տրվի ներքոնշյալ բոլոր առաջարկներին և խնդիրներին:

1. Առարկայական կարիներտները նոր կրթական պահանջներին համապատասխան կահավորում
2. Յուրաքանչյուր կարիներտ առնվազն մեկական համակարգչով հագեցվածություն
3. Բնտերնետային կապի պարտադիր առկայություն
4. Պրոյեկտորների թվի ավելացում
5. Բնագիտական առարկաների կարիներտների կահավորում, նյութատեխնիկական բազայի այլ միջոցների ապահովում
6. Լաբարատորիաների վերանորոգում և կահավորում
7. Հարմարավետ պայմանների և միջավայրի ստեղծում
8. Էլեքտրոնային գրադարանի առկայություն նաև գրադարանում ուսումնական գործընթացին վերաբերող գրականության համալրում/ապահովել ընթերցասրահով

9. Օտար լեզուների կաբինետների կահավորանք, որպեսզի կարողանան օգտվել պատրաստի տեսաձայնային դասի առկայությունից

10. Ուսումնական նյութերի ձեռնարկների ապահովում

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կրթական և ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության, ինչպես նաև սովորողների շրջանում հետաքրքրության բարձրացման նպատակով նախատեսում ենք կազմակերպել բազմաբովանդակ հանդիպումներ գիտության, արվեստի, սպորտի և այլ ոլորտների ներկայացուցիչների, աշակերտների, ինչու չէ նաև ծնողների, մանկավարժների շրջանում, անցկացնել բաց դասեր, կլոր սեղաններ, սեմինարներ:

Դպրոցն ունի նախնական զինվորական պատրաստության կաբինետ:

Դպրոցը չունի կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի և աշխարհագրության լաբորատորիաներ՝ անհրաժեշտ սարքավորումներով, նյութերով, զննական պարագաներով: Լաբորատորիաները ունեն վերանորոգման կարիք:

Առաջիկայում նախատեսում ենք և՛ սարքավորումների և՛ անհրաժեշտ նյութերի և պարագաների հավելում՝ աշակերտների շրջանում բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով:



Կարևորագույն հարցերից մեկը դպրոցում պետք է լինի երեխաների առողջության պահպանումը: Այս նպատակով կարևորում ենք սովորողների շրջանում պարբերաբար կազմակերպել տարատեսակ միջոցառումներ, հանդիպումներ, դասախոսություններ անառողջ սովորությունների վնասակարության թեմայով:

Դպրոցում առկա է բուժսենյակ՝ անհրաժեշտ դեղորայքով:

Աշակերտների բացակայությունները պետք է խստորեն վերահսկվեն, ճշտվեն պատճառները, բացառվեն անհարկի բացակայությունները: Անհրաժեշտության դեպքում Առողջապահության նախարարության համապատասխան հրամանի համաձայն՝ դասարանները օպերատիվ կերպով անցնում են առցանց ուսուցման՝ իրենց դասացուցակով: Դպրոցում խստորեն պահպանվում են սանիտարահիգիենիկ

պահանջները, կատարվում է ամենօրյա ախտահանում:

Դպրոցում պետք է տարվի ամենօրյա հետևողական աշխատանք՝ բոլորի համար հաճելի մթնոլորտ ստեղծելու բարդ գործը իրականացնելու համար: Աշակերտները պետք է ունենան միմյանց հետ ճիշտ շփվելու մշակույթ, իսկ դա պետք է անել սեփական օրինակով: Դպրոցի տնօրենի կարևորագույն խնդիրներից մեկը բարոյահոգեբանական ճիշտ մթնոլորտի ձևավորումն ու պահպանումն է թե՛ մանկավարժների, թե՛ ուսումնական հաստատության մյուս աշխատակիցների շրջանակում:

Երեխաները և նրանց ծնողները պետք է համոզված լինեն, որ դպրոցում երեխաները ապահով են, պաշտպանված, մշտապես ուշադրության կենտրոնում:

Ճիշտ կրթական միջավայրի ապահովման գլխավոր գրավականներից մեկը բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտի ապահովումն է:

ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

«Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցյալ»:

Բուլինգը դպրոցներում, հուզական, ֆիզիկական կամ սեռական բռնություն է, որը կատարվում է երեխաների կամ մանկավարժների կողմից, դպրոցի աշակերտների նկատմամբ, կամ աշակերտների կողմից՝ ուսուցիչների նկատմամբ:

Դպրոցում երեխային կարող են նվաստացնել հոգեբանորեն և ֆիզիկապես, նրանից գումար, կամ այլ արժեքավոր իրեր իլել, դրդել հանցագործության և այլն: Այսպիսի անիրավական գործողությունների մեղավորներ կարող են լինել այլ աշակերտներ, կամ ուսուցիչներ, բացի այդ, աշակերտը կարող է բռնության ենթարկվել այլ աշակերտների ծնողների կամ հարազատների կողմից, դպրոցի տարածքում:

Դպրոցը կարևոր սոցիալականացման օղակ է, իսկ դասարանը առաջնային սոցիալական խումբ, որտեղ ինտենսիվորեն ձևավորվում են սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Այս առումով, հանրակրթության որակը ոչ միայն կրթության հասանելիությունը, բովանդակությունը և պատշաճ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, այլև անվտանգ հոգեբանական միջավայրը, որտեղ աշակերտը գերծ է ցանկացած բռնությունից և հնարավորություն ունի լիարժեք օգտագործել իր անձի զարգացման այդ կարևոր տարիները: Եվ եթե ֆիզիկական բռնությունը ավելի տեսանելի և դատապարտելի է, ապա սոցիալ-հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումներ (պիտակավորում, վիրավորանք, ծաղր, հայհոյախոսություն, կոպտախոսություն, բամբասանքներ, բացառում և այլն), որոնք միավորվել են bullying տերմինի ներքո, ավելի քիչ դատապարտելի են հասարակության կողմից, ավելի դժվար չափելի են, իսկ բացահայտման և կանխարգելման մեխանիզմները թե՛ օրենսդրական ակտերի բովանդակության, թե՛ դրանց կիրարկման մակարդակում ևս հստակ սահմանված չեն:

Բուլինգի լուծումներ միշտ կան: Այս խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է լինեն երեխա, ծնող և ուսուցիչ ակտիվ համագործակցության ու, միևնույն ժամանակ, նրանց հանդեպ անհատական մոտեցման շնորհիվ:

Բուլինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ գղեցությունը: Ամեն ինչ պետք է սկսել կանխարգելումից:

Դպրոցում կարող ենք կազմակերպել բաց դասեր, իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան երևույթին:

Դասդեկի ժամերին կարող ենք պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վաստակողությունների մասին:

Աշակերտների մոտ բուլինգ նկատելու դեպքում պետք է լսել երկու կողմին էլ, առանց նվաստացումների բուլերին բացատրել, որ բուլինգը վատ երևույթ է:

Պետք չէ խրախուսել բուլերների կատարած վատ արարքները: Թե՛ բուլերի, թե՛ զոհի ծնողներին անհրաժեշտ է զգուշացնել հարաբերությունների և գործողությունների ընթացքի մասին՝ նրանց հետ լինելով ակտիվ համագործակցության մեջ:

Բուլինգի կանխարգելման հարցում անհամեմատելի է ծնողի դերը:

Ծնողը պետք է միշտ պատրաստ լինի երեխայի հետ երկխոսության և քննարկի թե՛ լավ, թե՛ վատ արարքները:

Պետք է դառնա երեխայի համար վստահելի, լավ ընկեր, խրախուսի այն ժամանակ, երբ պատմում է իր խնդիրների մասին, սովորեցնի իր խնդիրներն ինքնուրույն լուծել, բայց նաև ցույց տա իր աջակցությունը և միշտ հիշեցնի, որ նրա կողքին է:

Պետք է ճանաչի իր երեխայի ընկերներին, հասկանալով թե ում հետ է անցկացնում երեխան իր ժամանակը:

Պետք է օգնել երեխային հասկանալ, թե ինչ է բուլինգը, և ինչպես կարելի է կանխել այն: Բացատրելով, որ բուլինգը լավ երևույթ չէ և կարող է վատ ազդեցություն ունենալ ինչ-որ մեկի համար:

Պետք է երեխային սովորեցնել կարեկից լինել և, իհարկե, կարեկցել նրան:

Երբ երեխան ենթարկվել է բուլինգի, պետք է առաջին հերթին ուսումնասիրել իրավիճակը համակողմանի: Ժամանակ տրամադրել, հասկանալու համար, թե իրականում ինչ է պատահել, ովքեր են ներգրավված եղել, ինչպես է ամեն ինչ սկսվել:

Անհրաժեշտ է կապ պահպանել ներգրավված բոլոր երեխաների ծնողների հետ՝ նրանց զգուշացնելով իրենց երեխայի վարքի մասին:

Ծնողը պետք է համագործակցի դպրոցի հետ, քննարկելով յուրաքանչյուր հանգամանք և աջակցի երեխային պահանջելով, որ բուլերը կրի ատասխանատվություն իր կատարածի համար, քանի որ երբ նա իր արարքին համապատասխան պատասխանատվությունը չի կրում, անպատժելիության մթնոլորտում նման դեպքերի հաճախականությունը մեծանում է:

Ծնողը պետք է մշտապես կապ պահպանի դպրոցի հոգեբանի հետ, հանդիպի և նրա հետ քննարկի իր երեխայի պահվածքը: Երեխայի և հոգեբանի համատեղ աշխատանքը ևս կարող է օգնել այս հարցում:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Դպրոցը հասարակության փոքր մոդելն է: Որպեսզի ժողովրդավարությունը դառնա գործուն համակարգ, շատ կարևոր է այն ներդնել դպրոցում: Դպրոցը առաջին պարտադիր հասարակական ինստիտուտն է, որին առնչվում են երեխաները: Երեխաները գալիս են տարբեր ընտանիքներից, ունեն տարբեր մոտեցումներ, կարծիքներ: Նրանցից յուրաքանչյուրը անհատականություն է և իր դասընկերների հետ ունեցած ընդհանրություններից զատ, ունի նաև տարբերություններ: Ակնհայտ է, որ եթե դպրոցը չստեղծի համապատասխան միջավայր երեխայի անհատականության զարգացման համար, ապա մենք չենք ունենա կայացած հասարակություն: Եթե գիտելիքները, հմտությունները ձեռք են բերվում երեխայի անհատականությունը ճնշելու հաշվին, ապա արդյունավետ չէ: Երեխայի անհատականությունն է այն առանցքը, հիմքը, որի վրա պիտի զարգացնենք նրա կարողունակությունները: Բայց երեխայի անհատականությունը հնարավոր չէ զարգացնել, եթե չունենք բազմակարծիք, համագործակցող, տարբերությունները հարգող ուսուցչական կազմ: Այս առումով դպրոցում կարևորվելու է

բազմակարծությունը: Տարբեր կարծիքներ ունենալը դիտվելու է որպես հնարավորություն, հարստություն: Նման վերաբերմունքով հնարավոր կլինի դպրոցում ստեղծել ապահով հոգեբանական միջավայր, ինչն էլ արդյունքում կրեթի մասնակցության մեծացման: Ուսուցիչներն ու աշակերտները հնարավորություն կունենան արտահայտելու իրենց տեսակետները և դպրոցը դիտարկելու որպես հանրային բարիք, որի զարգացումը հնարավոր է բոլորի խելամիտ մասնակցության դեպքում:

Մահմանված են բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման համար ստեղծվելու է սյունակաշար (ռուբրիկ), որի միջոցով գնահատելու ենք իրավիճակը: Գնահատմանը մասնակցելու են աշակերտները (6-րդ դասարանից սկսած), ծնողները, ուսուցիչները: Հարցումներն անցկացնելու ենք ամեն տարվա վերջին: Դրանց արդյունքները վերլուծելու ենք: Գնահատումների հիման վրա կատարելու ենք փոփոխություններ:

Դպրոցում կան ԿԱՊԿՈւ գրանցվաց հինգ աշակերտ, իսկ դպրոցում՝ մուտքերում, դասասենյակներում, դահլիճներում, գրադարանում տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված չէ ֆիզիկական մատչելիություն: Անհրաժեշտ է ստեղծել ռեսուրսներ: Մանկավարժական համակազմը համալրվել է ուսուցչի օգնականներով: Ուսուցչի օգնականները աշխատում են դիտարկված և ՏՄԱԿԻ-ի կողմից չգնահատված, ուսումնառության խնդիրներ ունեցող աշակերտների հետ:

Անհրաժեշտ է դպրոցի վեբ կայքում գործարկման մեջ դնել նեառական կրթության բաժին, և ներկայացնել այս գործընթացը՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ: Պլանավորում են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ, իրականացել երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր: Դպրոցի աշխատակազմը արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում:


Մահմանված են դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշները

Այս բաղադրիչները գնահատելու համար ստեղծվելու ենք սյունակաշար (ռուբրիկ): Սյունակաշարի միջոցով կատարելու ենք ինչպես քանակական գնահատումներ, այնպես էլ որակական: Սյունակաշարերը պարբերաբար թարմացվելու են, իսկ արտահայտված կարծիքները հաշվի ենք առնելու իրավիճակը բարելավելու համար:

Բարելավել դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքները, մեծացնելով ծնողների դերը, մշակել և դպրոցում ներդնել արդյունավետ մեխանիզմներ՝ ներմուծելով կրթական արդի ծրագրեր: Ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց համագործակցությունը, բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը ծնողներին ակտիվորեն ներգրավելով դպրոցի գործունեության մեջ:


ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

<< Երևանի Ա. Մանուկյանի անվ. հ. 93 միջև. դպրոց >> ՊՈԱԿ-ի 2022թ. դրամական միջոցների հոսք
 ներհոսքեր՝ 124066800 դրամ
 արտահոսքեր՝ 140392300 դրամ
 ազատ մնացորդ տարվա սկզբին՝ 19531300 դրամ
 ազատ մնացորդ տարվա վերջին 3205800 դրամ



- աշխատավարձ 111795900 դրամ
- Էներգետիկ ծառ.8037100դրամ
- կոմունալ ծառ.447100դրամ
- կապի ծառ.72800դրամ
- կապմաննագրայի ծառ. ձեռքբերում 325000դրամ
- ընթացիկ վերանորոգում 1015000 դրամ
- Նյութեր(ապրանքներ)2289700դրամ
- Նպաստներ բյուջեից50000 դրամ
- այլ ծախսեր 2903800 դրամ
- պարգևատրում 1200000դրամ
- մասնագիտական ծառ. 850000դրամ
- հարկային պարտ. 13300
- պարտադիր վճարներ 592600դրամ

<<Երևանի Ա. Մանուկյանի անվ. հ. 93 միջև. դպրոց >> ՊՈԱԿ-ի 2023թ. դրամական միջոցների հոսք
 ներհոսքեր՝ 130127300 դրամ
 արտահոսքեր՝ 143161700դրամ
 ազատ մնացորդը տարվա սկզբին՝ 23573600 դրամ
 ազատ մնացորդը տարվա վերջին՝ 10539200 դրամ



- աշխատավարձ 116930500 դրամ
- Էներգետիկ ծառ. 8901400 դրամ
- կոմունալ ծառ.334200դրամ
- կապի ծառ. 73300 դրամ
- մասնագիտական ծառ. 800000 դրամ
- պայմ. ծառ. ձեռքբերում 419000դրամ
- նյութեր(ապրանքներ)2190000դրամ
- պարտադիր վճարներ 540000
- պարգևատրում9000000դրամ
- այլ ծախսեր2840000դրամ

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

Նախահաշիվը և հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում:

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեից:

Գումարը պայմանավորված է աշակերտների թվով:

Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են՝

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ /ներառյալ եկամտահարկը/
- Կոմունալ վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- Կապիտալ ծախսեր/պարգևավճարներ, վերանորոգում
- Այլ ծախսեր:

ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցների մեծ մասը բաժին է ընկնում աշխատավարձերի և համապատասխան հարկերի վճարմանը, ապա կոմունալ ծախսերին:

Դպրոցը հոգում է էլեկտրաէներգիայի, ջրի, գազի խնայողության մասին

Հ/Հ	Հոդվածի անվանումը	1-ին եռամսյակ	6 ամիս	9 ամիս	Տարեկան
I	Դրամական միջոցների ազատ մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	23573.6	23573.6	23573.6	23573.6
II	Ընդամենը միջոցների ներհոսքեր	25575.5	61838.9	97343.3	130127.3
1	Մուրփիդիա	24281.8	59509.5	93978.2	123723.5
2	Այլ եկամուտներ բյուջեից, այդ թվում՝	1293.7	2329.4	3365.1	6403.8
2.1	Այլ նպաստներ բյուջեից	1293.7	2329.4	3365.1	6403.8
III	Ընդամենը դրամական միջոցների արտահոսքեր	48891.1	85154.5	120658.9	143161.7
Ա	Ընթացիկ, այդ թվում՝	458891.1	76314.5	108818.9	131321.7
1	Աշխատավարձ	39614.7	67159.7	98007.7	116930.5
2	Էներգետիկ ծառայություններ	4200.0	5400.0	6200.0	8901.4
3	Կոմունալ ծառայություններ	100.0	180.0	250.0	334.2
4	Կապի ծառայություններ	17.4	35.8	52.2	73.3
5	Մասնագիտական ծառայություններ	250.0	400.0	600.0	800.0
6	Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	419.0	419.0	419.0	419.0
7	Ընթացիկ վերանորոգում	150.0	1080.0	1100.0	1133.3
8	Նյութեր (ապրանքներ)	800.0	1200.0	1700.0	2190.0
9	Պարտադիր վճարներ	340.0	440.0	490.0	540.0
Բ	Կապիտալ, այդ թվում՝	0.0	2840.0	2840.0	2840.0
1	Հիմնական միջոցների ձեռքբերում, այդ թվում՝	0.0	2840.0	2840.0	2840.0
1)	Վարչական սարքավորումների ձեռքբերում	0.0	2840.0	2840.0	2840.0
գ	Տարեսկզբի դրամական միջոցների ազատ մնացորդի օգտագործում, այդ թվում՝	3000.0	6000.0	9000.0	9000.0
1	Պարգևատրում	3000.0	6000.0	9000.0	9000.0
IV	Դրամական միջոցների ազատ մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	258.0	258.0	258.0	10539.2

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

<p><u>ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Արտաբյուջետային ֆինանսավորում (Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումից) ➤ Լրացուցիչ կրթական ծառայությունների տրամադրման միջոցով ուսուցիչներին հավելյալ եկամտի ապահովում ➤ "Հայկական ծրագրեր" հաշվապահական ծրագրի կիրառում ➤ Աշխատավարձերի և հարկերի ժամանակին վճարում 	<p><u>ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Պետական բյուջեի անբավարար միջոցներ ➤ Ուսուցիչների ցածր աշխատավարձ ➤ Բյուջեի ազատ տնօրինման սահմանափակություն ➤ ՀԿ-ների հետ ծրագրերի պակաս
<p><u>ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Դոնորների քանակի ավելացում ➤ ՀԿ-ների հետ համագործակցություն ➤ Երկարորոյա ուսուցման կազմակերպում ➤ Լրացուցիչ կրթական ծառայությունների տեսականու ավելացում 	<p><u>ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ</u></p> <ul style="list-style-type: none"> ➤ Դպրոցի միջոցներն ինքնուրույն տնօրինելու հնարավորության ➤ Բյուջեի ազատ տնօրինման սահմանափակություն ➤ Բյուջեի կրճատման հետևանքով զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների ձախողում ➤ Վարչատնտեսական ղեկավարման առանձնացումը ուսումնականից

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նպատակ	Խնդիրներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Պատասխանատուներ	Ժամկետներ	Ֆինանսավորման աղբյուր
Դպրոցի ֆինանսական կայունության ապահովում և ֆինանսական միջոցների արդյունավետ տնօրինում	Իրականացնել միայն անհրաժեշտ գնումներ:	Ֆինանսական միջոցները օգտագործել իրենց նպատակային ուղղություններով	Արդյունավետ բաշխված ֆինանսական միջոցներ	Տնօրեն	2023-2028թ. թ	Ֆինանսավորում չի պահանջում
	Իրականացնել առկա ֆինանսական միջոցների օգտագործման	Պլանավորել գնումների կազմակերպման և բյուջեի բաշխման գործընթացը			2023-2028թ. թ	

արդյունավետ բաշխում		Իրականացնել ձեռնարկատիրական գործունեության օրենքով չարգելված ծրագրեր	Լրացուցիչ Ֆինանսական միջոցների ներգրավում		2023- 2028թ. թ	Ֆինանսավո րում չի պահանջում
		Մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ ուղղությունների գծով՝ 1)իրականացնել հատուկ կամ լրացուցիչ, կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար. 2)իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր. 3)կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստակ ան Հավաքներ և դասընթացներ. 4)ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր(այդ թվում՝ էլեկտրոնային):	Լրացուցիչ ֆինանսավորման ավելացում	Տնօրեն և աշխատակազ մ	2023- 2028թ. թ	Պետական բյուջե
		Նվազագույնի հասցնել	Միջոցների արդյունավետ բաշխում	Տնօրեն և աշխատակազ մ	2023- 2028թ. թ	Ֆինանսավո րում չի պահանջում

		նախատեսված և փաստացի շեղումների ծավալը:				
--	--	---	--	--	--	--

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ

Առանձնահատուկ ուշադրություն դարձնել հասարակության կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորմանը: Դպրոցի մանկավարժական համակազմի որակի բարելավումը ենթադրում է սովորողների կրթության մակարդակի բարձրացում, դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում:

Ապահովել արդար, սկզբունքային գնահատում, կիրառել գնահատման նոր մոտեցումներ՝ նոր չափորոշիչներին համապատասխան:

Ապահովել դպրոցը ուսումնամեթոդական գրականությամբ: Մշակել դասալսման և ուսուցչի աշխատանքի գնահատման բովանդակալից, թվային ամփոփվող ձևեր:

Ուսուցիչների կողմից համակարգչային գիտելիքներ ձեռք բերելու և կատարելագործելու նպատակով կազմակերպել ներդպրոցական ուսումնական միջոցառումներ:

Խրախուսել մանկավարժներին հետազոտական աշխատանքներ կատարել և ներկայացնել սեփական գիտակրթական նյութերը:

Ապահովել փորձի փոխանակում սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև:

Խթանել ուսուցիչների մասնակցությամբ տարբեր մրցութային և կատարելագործման ծրագրերին:

Կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ է գնահատել կրթության որակի փաստացի վիճակը, որի համար շատ կարևոր են արտաքին և ներքին գնահատումը, դասալսումները, վիճակագրական վերլուծությունները և արդյունքների համադրումը:

Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել և զարգացնել գիտելիքներ, հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության

մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային մոտեցումներ: Կարողությունների ձևավորմանն ուղղված դասերը հնարավորություն են տալիս ոչ ավանդական ձևերով և մեթոդներով ընդհանրացնել աշակերտների գիտելիքները, զարգացնել նրանց մտածողական գործունեությունը, աշակերտների մեջ ներշնչել վստահություն, համարձակություն և հետաքրքրասիրություն:

Դպրոցում ուսման որակի վրա մեծ ազդեցություն են ունենում տարբեր առարկայական օլիմպիադաներում աշակերտների գրանցած արդյունքները, ԳԹԿ- ի կողմից գիտելիքների ստուգման համար նախատեսված գրավոր աշխատանքների արդյունքները:

Ուսման որակի բարելավման աշխատանքները պետք է սկսել տարրական դպրոցից:

Դպրոցի արդյունավետ գործունեության համար կարևորագույն պայմաններից է լիարժեք նյութատեխնիկական ապահովվածությունը:

Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ ազատ մտածողությունը, որի արդյունքում աշակերտները շահագրգռվում են նորարական մեթոդների օգտագործման և տարածման հարցում:

Դպրոցի նպատակներն ու խնդիրները իրար հետ խիստ կապված են: Կարևոր խնդիրներից մեկը դպրոցի վերանորոգումն է, իսկ 6-րդ մասնաշենքի հիմնավերանորոգումը: Խնդրի լուծման արդյունքում կավելացվեն դասասենյակների թիվը, գրադարանը կվերանորոգվի, կհամալրվի ժամանակակից անհրաժեշտ տեխնիկայով և գույքով կդառնա հարմարավետ:

Նպատակ ունենք.

- փոխել ջրհորդանները, 5-րդ մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի պատուհանները և դռները
- վերանորոգել կաթսայատունը
- բարեկարգել դպրոցի բակը՝ ապահովելով սովորողների հանգիստը, ձևավորել սիրո և հոգատարության զգացում դեպի հայրենի բնությունը
- ստեղծել քիմիայի, կենսաբանության և ֆիզիկայի լաբորատորիաներ և համալրել անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներով

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի պատասխանատուներն են տնօրենը, փոխտնօրենները, մեթոդախմբի անդամները, ուսուցիչները, դասղեկները, գրադարանավարը, տնտեսավարը, որոնց ճիշտ և փոխհամագործակցված աշխատանքի արդյունքում դպրոցը կունենա ցանկալի և տեսանելի արդյունք: Օղակները պետք է աշխատեն համաձայնեցված՝ լրացնելով միմյանց: Միայն այդ ժամանակ աշխատանքը տեսանելի կլինի և ժամանակային առումով իրատեսական: Անհրաժեշտության դեպքում հաստատության գործունեության մեջ կատարվող և հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունների հետևանքով կարող են փոխվել նաև պատասխանատուները:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ

ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ:
2. Արտագաղթ , որը կբերի ֆինանսավորման կրճատման:
3. Ուսուցիչների ստեղծագործական նորարարական գործունեությունը խթանող խրախուսման միջոցների պակաս:
4. Հետպատերազմյան և համավարակի դժվարություններով պայմանավորված բարոյա-հոգեբանական մթնոլորտ:
5. Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները.
 - 5.1. Սովորողների թվաքանակի ավելացում:
 - 5.2. Եկամուտներին համապատասխան ծախսերի ճիշտ պլանավորում:
 - 5.3. Ֆինանսատնտեսական միջոցների իրատեսական նախահաշվի կազմում:
6. Արտաբյուտջեռային մուտքեր հետևյալ աղբյուրներից.
 - 6.1. նպատակային կրթական ծրագրերի միջոցով:
 - 6.2. Լրացուցիչ ձեռնարկատիրական գործունեության միջոցով:
7. Դասարանների պահանջվող խտության ապահովում:
8. Ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածության ապահովում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատման մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Ռիսկերը ցանկացած ծրագրի իրականացմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի և անսպասելի գործոններն են: Ցանկացած ծրագիր կամ ձեռնարկված գործողություն կապված է մի շարք ռիսկերի հետ, ուստի դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն էլ ունի իր ռիսկային գործոնները, որոնք կարող են ինչ-որ կերպ խանգարել դպրոցի զարգացման ծրագրում նախատեսված նպատակների իրականացմանը, օրինակ՝ տարերային աղետները, ֆորսմաժորային իրավիճակները, պատերազմները, իրավական հնարավոր կարգավորումների բացակայությունը, դպրոցի ֆինանսավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել ֆինանսական միջոցների նվազման և այլն: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են՝

- դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 2 անգամ դպրոցի տվյալուստարվա համար ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման քննարկումն ու համապատասխան գնահատականների ամրագրումը
- դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը
- համայնքի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավումը դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին և այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին
- զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից
- յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների

Ցուցանիշներ	1	2	3	4	5	Աղբյուր
Կրթություն բովանդակություն և որակ						
Նոր չափանիշների ներդրման գործողությունների ծրագրի կազմում						Համապատասխան ստորաբաժանումների հաշվետվություններ
Աշակերտների և ծնողների շրջանում շարունակական հարցումների իրականացում, կրթության որակի գոհունակության և կարիքների բացահայտման նպատակով (Թղթային կամ առցանց հարցաթերթիկների միջոցով)						Համապատասխան հարցաթերթիկներ, ամփոփագրեր, հաշվետվություններ
Աշակերտական խորհրդի ինքնավարության զարգացում (ակումբների, խմբակների, միավորների ստեղծում, տարբեր միջոցառումների կազմակերպում)						Ներքին գնահատման հաշվետվություններ
Ուսուցիչների համար մասնագիտական, մանկավարժահոգեբանական, SՏՏ վերապատրաստման դասընթացների իրականացում						Ներքին գնահատման հաշվետվություններ
Փորձի փոխանակման նպատակով երտ համագործակցել այլ դպրոցների հետ						Համատեղ միջոցառումներ
Ցուրաքանչյուր խորհրդի կողմից մեկ միասնական նպատակի, խնդրի ձևակերպում						Ներքին գնահատման հաշվետվություններ
Աշակերտների ցանկությունների կոորդինացում և վերջնական նպատակի հասցում						Աշակերտական խորհրդի հաշվետվություններ
Դասավանդման որակի վերահսկման նպատակով դասալսումների իրականացում, ստուգողական աշխատանքների անցկացում						Մեթոդական միավորումների հաշվետվություններ, ներքին գնահատման հաշվետվություններ

Մեծացնել ներգրավվածությունը առարկայական, օլիպիադաներում, այլ հեղինակավոր մրցումներում, հաղորդումներում (Օլիմպիական խմբակ, շնորհավիներիակումբ և այլ խրախուսման գործիքներ)					Մեթոդական միավորումների հաշվետվություններ, ներքին գնահատման հաշվետվություններ
Պարբերաբար հրավիրել հեղինակավոր մարդկանց, հայտնի գործարարների, գիտնականների, ոլորտի առաջատար մասնագետների հրեճ փորձով կիսվելու համար					Ներքին գնահատման հաշվետվություններ, զեկույցներ
Բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպել մասնագիտական կողմնորոշման պրակտիկաներ					Մասնագիտացված կրթական աջակցությունների, ներքին գնահատման հաշվետվություններ
Դպրոցը հազեցնել նորարարական տեխնոլոգիաներով (Արմաթ ինժինեռական լաբորատորիա, համակարգչային լիարժեք կահավորված դասասենյակ)					Ներքին գնահատման հաշվետվություն, ֆինանսական հաշվետվություններ
Սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով կազմակերպել աշակերտական կոնֆերանսներ, մրցույթներ, վիկտորինաներ, ֆորումներ, ինտելեկտուալ խաղեր					Մասնագիտացված կրթական աջակցությունների, ներքին գնահատման հաշվետվություններ
Հանրային առողջության, կիրառական ռազմագիտության, քաղաքացիական պաշտպանության թեմաներով զարգացնել սովորողների կարողունակությունը					Մասնագիտացված կրթական աջակցությունների, ներքին գնահատման հաշվետվություններ
Պարբերաբար կազմակերպել հանդիպում քննարկումներ, երկխոսություններ պետական, համայնքային ներկայացուցիչների, ծնողների և դպրոցի միջև՝ առկա խնդիրների բացահայտման նպատակով					Ներքին գնահատման հաշվետվություններ
Մանկավարժական համակազմ					

Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացի շարունակաբար իրականացում	20%	20%	20%	20%	20%	Տնօրենի հրամաններ, տարեկան հաշվետվություն
Մանկավարժական համակազմի մասնագիտական վերապատրաստումների իրականացում						Տարեկան հաշվետվություններ
Ուսուցիչների ժամանակակից դասավանդման մեթոդների յուրացման վերապատրաստումների կազմակերպում						Ներքին գնահատման հաշվետվություններ
Կազմակերպել դասարանի կառավարման և երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ ինտենսիվ դասընթացներ:						Ներքին գնահատման հաշվետվություններ
Նոր չափորոշիչների ներդրման մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստումների իրականացում						Ներքին գնահատման հաշվետվություններ
Երկարօրյա ուսուցման վճարովի լրացուցիչ ծառայության իրականացում						Պայմանագրեր, ծրագրեր, ուսումնական պլաններ, մատյաններ
Ընդլայնել հանրապետական և միջազգային գրադարաններից օգտվելու հնարավորությունները						Համատեղ պայմանագրեր, ներքին գնահատման հաշվետվություններ
Խրախուսել լավագույն ուսուցիչների մասնակցությունը համապետական մրցույթներին /լավագույն ուսուցիչ նայլն/:						Մրցանակներ
Կազմակերպել վաստակաշատ մանկավարժների մեծարման երեկոներ						Ներքին գնահատման հաշվետվություններ
Ստեղծել հաջողված հրապարակային վիդեո դասերի առցանց շտեմարան:						Վիդեո դասեր
Հարցում անցկացնել ուսուցիչների շրջանում նրանց անհատական կարիքները բացահայտելու նպատակով						Հարցաթերթիկներ, ներքին գնահատման հաշվետվություններ

Ծնող-ուսուցիչ կապն ամրապնդելու համար պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուրին					Համապատասխան զեկույցներ և արձանագրություններ
Ամեն դասասենյակում համացանցին ամրացված մեկ համակարգչի ձեռքբերում՝ ուսուցչի համար					Ներքին գնահատման հաշվետվություններ, հաշիվ ապրանքագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Պարբերաբար հրավիրել հայտնի անհատների, ոլորտի առաջատար մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաև սովորողների շրջանում ուսման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով					Մասնագիտացված կրթական աջակցությունների, ներքին գնահատման հաշվետվություններ
Տարբեր խորագրերով կազմակերպել հանդիպում-քննարկումներ պետական և ոչ պետական այլ ուսումնական հաստատություններին և կայացուցիչների հետ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Ուսումնասիրել մենթոր դպրոցդառնալու ընթացակարգերը և մասնակցել համապատասխան մրցույթներին:					Ներքին գնահատման հաշվետվություններ
Խթանել համագործակցությունը միջազգային և տեղական կրթական կառույցների հետ:					Ներքին գնահատման հաշվետվություններ
Աշակերտական համակազմ					
Կիրառել դասավանդման առավել ժամանակակից և նորարարական ինտերակտիվ մոտեցումներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Լաբորատորիաները և կաբինետը ծառայեցնել իրենց նպատակին՝ այնտեղ առավել հաճախ դասեր անցկացնելով					Ներքին գնահատման հաշվետվություններ
Ակտիվ բանավեճ, քննարկումներ կազմակերպել տարբեր դասարանների սովորողների միջև					Ներքին գնահատման հաշվետվություններ, մեթոդական միավորումների հաշվետվություններ

Ավելացնել առարկայական օլիմպիադաներին և այլ մրցույթներին մասնակցողների թվաքանակը					Ներքին գնահատման հաշվետվություններ, մեթոդական միավորումների հաշվետվություններ
Թատերական ներկայացումների կազմակերպում					Ներքին գնահատման հաշվետվություններ
Դպրոցում տեղադրել անանուն առաջարկների արկղ՝ սովորողներին իրենց միտքը անկաշկանդ արտահայտելու հնարավորություն ընձեռելով					Ներքին գնահատման հաշվետվություններ
Կազմակերպել ինտելեկտուալ մրցումներ դասարանների և այլ դպրոցների միջև					Ներքին գնահատման հաշվետվություններ, մեթոդական միավորումների հաշվետվություններ
Կազմակերպել տարբեր սպորտային միջոցառանայի մրցումներ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Կազմակերպել տարբեր սպորտային միջոցառումներ այլ դպրոցների աշակերտների հետ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Քննարկումներ և սեմինարներ կազմակերպել սովորողի բարեվարքության և վարվելակերպի էթիկայի կանոնների վերաբերյալ:					Ներքին գնահատման հաշվետվություններ
Կազմակերպել քննարկումներ շրջակա միջավայրի պահպանության թեմաներով					Ներքին գնահատման հաշվետվություններ
Կազմակերպել քննարկումներ պետական գույքի, դպրոցի գույքի և մշակույթային արժեքների պահպանման թեմայով:					Ներքին գնահատման հաշվետվություններ
Կազմակերպել զրույցներ, տեսահոլովակների դիտումներ հայրենիքի, ընտանիքի, առողջ ապրելակերպի, ծխախոտի և ալկոհոլի բացասական ազդեցության, գրքի կարևորության, սոց ցանցերում առկա վտանգների թեմաներով					Ներքին գնահատման հաշվետվություններ

Կազմակերպել զրույցներ, տեսահոլովակների դիտումներ բռնության, ֆիզիկական և հոգեբանական ճնշման, իրավունքների հավասարության, հանդուրժողականության, անվտանգության թեմաներով					Ներքին գնահատման հաշվետվություններ
Կազմակերպել սոցիալական ծրագրեր (Այցելություն մանկատներ, գորանոցներ, համայնքային մաքրության օրեր, ծառատունկ և այլն)					Ներքին գնահատման հաշվետվություններ, աշակերտական խորհրդի արձանագրություններ
Այցելություն մշակութային օջախներ, հուշահամալիրներ (Համերգ, թատրոն, կինո, բալետ, օպերա, թանգարաններ, աստղադիտարան)					Ներքին գնահատման հաշվետվություններ
Ծնողխորհրդի հետ համատեղ կազմակերպել էքսկուրսիաներ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Դպրոցում ստեղծել սպորտային խմբակներ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանն ապատակով կազմակերպել ցուցահանդես վաճառքներ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Լրամշակել ներքին կարգապահական կանոնները՝ հստակեցնելով աշակերտների իրավունքների և պարտականությունների շրջանակը:					Ներքին գնահատման հաշվետվություններ
Ստեղծել երաժշտական խումբ, որը կարող է ոչ միայն դպրոցում ելույթունենալ, այլ նաև տարբեր մրցույթների, համերգների, փառատոնների մասնակցել					Ներքին գնահատման հաշվետվություններ
«Մարզերի դպրոցները» խորագրով կազմակերպել մարզային դպրոցներ փոխադարձ այցելություններ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Օրվա թեմային առնչվող խաղերի կազմակերպում					Ներքին գնահատման հաշվետվություններ
Էլեկտրոնային գրադարանային բազայի ընդլայնում՝ գրադարանից օգտվողների քանակն ավելացնելուն ապատակով					Ներքին գնահատման հաշվետվություններ

Մասնագիտության կողմնորոշման նպատակով՝ այցելություն տարբեր բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններ					Ներքին գնահատման հաշվետվություններ
Կառավարման և խորհրդակցական մարմինները					
Ուսումնասիրել դպրոցների կառավարման ներկա մոդելները՝ փորձելով տեղայնացնել լավագույն փորձը					Ներքին գնահատման հաշվետվություններ
Մշտապես կատարելագործել տնօրենության կառավարման կարողությունները՝ ծրագրերի մշակման, ռեսուրսների ներգրավման, կոմունիկացիայի, վարչական աշխատանքի արդիականացման, արդյունավետության բարձրացման և այլ ուղղություններով					Ներքին գնահատման հաշվետվություններ
Իրականացնել լիազորությունների և պատասխանատվության բաշխում					Ներքին գնահատման հաշվետվություններ, կանոնադրություն
Կազմակերպել տարբեր սեմինարներ, վերապատրաստումներ՝ մասնակցային կառավարման մոդելը առավել արդյունավետ կիրառելու համար					Ներքին գնահատման հաշվետվություններ
Զարգացնել մեթոդական միավորումների կարողությունները՝ դարձնելով դրանք բովանդակային նորարարությունների մշակման և ներդրման հարթակներ:					Ներքին գնահատման հաշվետվություններ
Զարգացնել աշակերտական խորհրդի կարողությունները					Ներքին գնահատման հաշվետվություններ
Խորհրդակցական մարմիններ ծանոթացնել միջազգային առաջավոր փորձին					Ներքին գնահատման հաշվետվություններ

Դասղեկների համար կազմակերպել վերապատրաստումներ՝ դասարանի արդյունավետ կառավարման համար					Ներքին գնահատման հաշվետվություններ
Խորհրդակցական քննարկումներ խորհրդակցական բոլոր մարմինների միջև՝ համատեղ գործողությունների պլան մշակելուն պատասկով:					Ներքին գնահատման հաշվետվություններ, համատեղ գործողությունների պլան
Խրախուսել ակտիվ նախաձեռնություններով հանդես եկողներին					Ներքին գնահատման հաշվետվություններ
Շրջանավարտների խորհրդի ձևավորում					Ներքին գնահատման հաշվետվություններ, խորհրդի արձանագրություն
Շրջանավարտների համախմբման միջոցառումների իրականացում					Ներքին գնահատման հաշվետվություններ
Հասարակական և այլ բարեգործական ընկերությունների հետ համագործակցության ընդլայնում					Ներքին գնահատման հաշվետվություններ
Ուսումնական միջավայր					
Կապիտալ վերանորոգել մարզադահլիճը					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Վերանորոգել բակի տարածքը					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Հիմնել առաձին ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Հիմնել պատմության, երաժշտության դասասենյակներ					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ

Հիմնել ռոբոտաշինության, ծրագրավորման լաբորատորիա					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Ստեղծել արհեստանոց					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Վերանորոգել հանդիսությունների դահլիճը					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Փոխել լուսավորությունն առավել էլեկտրախնայող լամպերով (օրինակ՝ լեդ լամպերով)					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Բոլոր դասարանները կահավորել էլեկտրոնային գրատախտակներով					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Ավելացել պրոեկտորների քանակը					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Համալրել առկա համակարգչային սենյակը նավելացնել ևս մի քանիսը					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Ստեղծել ժամանակակից պայմաններին համապատասխան ճաշարան					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Ստեղծել վեբ կայք և պարբերաբար թարմացնել					Ներքին գնահատման հաշվետվություններ, վեբ կայք

Վեր կայք էջը և սոցիալական հարթակները օգտագործել որպես ոլորտի նորարարությունների տարածման կարևորագույն աղբյուր և համայնքի հետ հետադարձ կապի և տեղեկատվության տարածման կարևորագույն հարթակներ					Վեր կայք
Սովորողների համար նոր պահարանների տեղադրում					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Հիմնել էլեկտրական հրաձգարան					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Իրականացնել սրահների և դասարանների ընթացիկ վերանորոգում					Ներքին գնահատման հաշվետվություններ, գնման պայմանագրեր, ֆինանսական հաշվետվություններ
Ֆինանսատնտեսական գործունեություն					
Ֆինանսական միջոցները օգտագործել իրենց նպատակային ուղղություններով					Ներքին գնահատման հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ
Պլանավորել գնումների կազմակերպման և բյուջեի բաշխման գործընթացը					Բյուջեի նախահաշիվ
Իրականացնել ձեռնարկատիրական գործունեության օրենքով սահմանված ծրագրեր					Ներքին գնահատման հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ
Նվազագույնի հասցնել նախատեսված և փաստացի շեղումների ծավալը:					Համեմատական վերլուծություն

ԵԶՐԱՓՈՒՄ

**«Կրթությունը ամենահզոր զենքն է,
որը դու կարող ես օգտագործել
աշխարհը փոխելու համար»:
Նելսոն Մանդելա**

Որպես եզրակացություն կամ զարգացման ծրագրի տեսլական մեծագույն բաղձանքս է, որ դպրոցը լինի կրողը ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՕՋԱԽ բովանդակությանը. ինքս բոլոր ջանքերս ուղղորդելու եմ որակյալ կրթակարգի ձևավորմանը, ժամանակի մարտահրավերներին համահունչ բազմակողմանի զարգացած, մրցունակ անհատ, հասուն քաղաքացի, բարձր արժեքների կրող սերնդի դաստիարակմանը: Նմանօրինակ կրթօջախում մանկավարժը գնահատված կլինի իր վաստակով, քանզի շրջանավարտը երաշխավորն է հայրենիքի հզորացման:

Տնօրենի պաշտոնի հավակնորդ՝ Ա. Հովսեփյան

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ Է. 93 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

Ս. Ա. Մովսիսյան

ԵՐԵՎԱՆ 2023

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	6
Ծրագրային նպատակներ, խնդիրներ, կրթական կարիքների նկարագրություն.....	7
1. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	9
1.1 Շենքյաին պայմանների վերլուծություն.....	10
1.2 Դպրոցի նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն.....	12
1.3. Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն.....	13
1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.....	16
1.5 Հաստատության համագործակցությունը առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ.....	22
1.6 Օգտատրծվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում	36
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	36
1.7 Չափորոշային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը.....	37
1.9 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն.....	41
1.10 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնկրթության հնարավորությունների վերլուծությունը	49
2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ.....	53
2.1 Նպատակների սահմանում, դրանց համապատասխանությունը ատկա իրավիճակին:.....	53
ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՁևԱԿԵՐՊՈՒՄ	53
2.2 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ.....	56
3.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ, ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ Ն ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ.....	63
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	63
ՄԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	64
5 .ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ	85

6 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶՄՓԱՆԻՇՆԵՐԸ	94
6.1. Յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող գնահատման չափանիշները.....	94
6.2 Կրթության որակի և առաջադիմության ուսուցման նպատակներ և չափորոշչային պահանջներ.	95
6.3 Բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները.....	96
6.4 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշները.....	96
6.5 Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ	97
6.6 Բուլինգի կանխարգելման գնահատման չափանիշների համակարգ	97
7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՄԿԵՐԸ.....	97
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	97
ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	99
8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ.....	101
9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.....	102
<i>ԵԶՐԱՓՈՎԱԿՈՒՄ</i>	<i>103</i>

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:

/ ՀՀ Մահմանադրություն, հոդված 39/

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

Ծրագրի հիմքում դրվել են նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև՝ Դավիթաշեն վարչական տարածքի առանձնահատկությունները:

Ծրագիրս ուղղված է դպրոցի աստիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվությունից:

Ծրագրի առանցքային գաղափարը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, նպաստավոր կրթական գործընթացի կազմակերպումն է՝ ուղղված սովորողների ճանաչողական գործունեության, ինքնավստահության և կրիտիկական որոշումների կայացման ձևավորմանը, հասնելու իրավասությունների համար անհրաժեշտ հաջող ադապտացման, այդ թվում՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ: Այս ամենը պետք է ծառայի սովորողի սոցիալապես նշանակալից հատկությունների ներդաշնակ զարգացմանը:

Դպրոցի զարգացման ծրագիրը միտված է զարգացնել հանրակրթական ուսումնական հաստատությունը հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներին համապատասխան հետևյալ ուղղություններով.

- Ապահովել հանրակրթության հավասար հնարավորություններ, մատչելիություն, շարունակականություն, հաջորդականություն «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ի սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին համապատասխան
- Կառավարել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների պահանջներին համապատասխան

- Խթանել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սովորողների ստեղծագործական աշխատանքի, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը
- Բարելավել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեության որակի շարունակական բարելավումը միջազգային չափանիշներին համապատասխան (ինչպես նաև միջազգային առաջավոր կրթական համակարգերի իտեգրում)
- Աստիճանական դինամիկ աճով հավասարակշռել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինքնավարությունը և պետական վերահսկողությունը
- Ապահովել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը
- «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ում այլ կրթական ծրագրեր ներդնելու պարագայում փոխհամաձայնեցնել դրանք հանրակրթական պետական ծրագրերի հետ
- Նպաստել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի յուրաքանչյուր սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը
- Նպաստել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում մարդկային արժանապատվության պահպանմանը
- Նպաստել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ի յուրաքանչյուր սովորողի իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը
- Նպաստել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ի յուրաքանչյուր սովորողի ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը
- Նպաստել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ի յուրաքանչյուր սովորողի մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը
- Օժանդակել «Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի յուրաքանչյուր սովորողի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ սերունդ քաղաքացիական առողջ հասարակության համար:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատվության», «ինտեգրման» անվանված քսանմեկերորդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Դպրոցի առաքելությունը իր սովորողներին ազգային հենքի վրա որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, որը չի տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Ծրագրային նպատակներ, խնդիրներ, կրթական կարիքների նկարագրություն

«Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեության հիմքում ընկած է կրթության մասին ՀՀ օրենքի հոդված 18-ի պահանջները, որի նպատակն է սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն:

Դպրոցի կրթական կարիքների գնահատումը ներառում է ստորև ներկայացվող հիմնական ուղղությունները (որոնք նպաստում են կրթության արդյունավետ մատուցմանը և սովորողների համակողմանի զարգացմանը .

- **Ուսումնական ծրագրերի որակական գնահատում**, լավ մշակված և համակողմանի ուսումնական ծրագրեր, որոնք համապատասխանում են կրթական չափորոշիչներին և բավարարում է սովորողների ուսուցման բազմազան կարիքները
- **Ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետություն գնահատում**, արհեստավարժ ուսուցիչների ներգրավվածությամբ արդյունավետ ուսուցման ռազմավարությունների կիրառում, ովքեր տրամադրում են սովորողներին տարբերակված աջակցություն անհատական ուսումնական նպատակներին հասնելու համար
- **Ռեսուրսների գնահատում (այդ թվում մարդկային)**, արդիական, նպատակային ռեսուրսների օգտագործման գնահատում մանկավարժական և վարչական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարման գործընթացում (դասագրքերը, տեխնոլոգիաները, լաբորատոր սարքավորումները, ուսումնական նյութերը և այլ ռեսուրսներ)
- **Ենթակառուցվածքների գնահատում**, համապատասխան ֆիզիկական ենթակառուցվածքների, ներառյալ դասարաններ, գրադարաններ, ուսումնական լաբորատորիաներ, համակարգչային լաբորատորիաներ, խաղահրապարակներ և այլ հարմարությունների առկայություն ու կիրառականություն նպաստավոր ուսումնական ֆիզիկական միջավայր ստեղծելու համար
- **Տեխնոլոգիաների ինտեգրման գնահատում**, համապատասխան ռազմավարությունների կիրառում տեխնոլոգիական գործիքների և ռեսուրսների հասանելիություն, որոնք նպաստում են թվային գրագիտության, մեդագրագիտության զարգացմանը, ընդլայնում են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման փորձառությունը ու

խթանում պահանջարկային կրթության կազմակերպմանը

- **Կրթական այլ ծառայությունների կազմակերպման գնահատում**, օժանդակ կրթական ծառայությունների տրամադրում, ինչպիսիք են արտադասարանական աշխատանքներ, արտադպրոցական գործունեություն, երկարօրյա ուսուցում, որոնք ուղղված են սովորողների տարբեր կարողունակությունների զարգացմանը (ակադեմիական, սոցիալական և այլ)
- **Հանրակրթական պետական ծրագրերի իրականացման գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում հ հետադարձ կապ**. գործընթացի կազմակերպման շարունակական գնահատման արդյունավետ համակարգերի ներդրում սովորողների ուսուցման, ուսումնառության առաջադիմությունը գնահատելու, հետադարձ կապ ապահովելու, ուսումնական գործունեության և ուսումնական ծրագրերի բարելավման համար
- **Համայնքի ներգրավվածության գնահատում**, համագործակցություն սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) համայնքային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ սովորողների կրթության կազմակերպման գործընթացի աջակցության նպատակով
- **Գործընթացի կազմակերպման ներառականության և բազմակարծիք մոտեցումների կիրառման գնահատում**, խթանել բազմատեսանկյուն մոտեցումների կիրառումը և համընդհանուր ներառականությունը հաստատությունը արժևորում, հարգում, գնահատում է բոլորի անհատական իրավունքները, ծագումը, մշակույթը, կարողունակությունները ու անհատի այլ առանձնահատկությունները
- **Շարունակական մասնագիտական զարգացման գնահատում**. հաստատության աշխատողների համար հնարավորություններ ստեղծել ներգրավվելու շարունակական մասնագիտական զարգացման մեջ բարձրացնելու իրենց պատրաստվածությունը, արդիականացնելու լավագույն, առաջավոր փորձը և խթանելու շարունակական կատարելագործման մշակույթը:

Դպրոցի կրթությունը և դաստիարակությունը հիմնականում կազմակերպվում է պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխան («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք հոդված 4 և հոդված 5):

Դպրոցում չեն իրականացվում կրոնական քարոզչություն և քաղաքական գործունեություն: Յուրաքանչյուր սովորողի համար կազմակերպված կրթությունը հիմնականում նպատակաուղղված է նրա.

- Մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը
- Մարդկային արժանապատվության պահպանմանը

- Իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը
- Ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը
- Մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը
- Ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը
- Որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

1. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1939 թվականին, 1978 թվականին դպրոցը տեղափոխվել է նորակառույց մասնաշենք:

1998 թվականին անվանակոչվել է դպրոցի նախկին սան, «Սասուցի Դավիթ» ջոկատի հրամանատար . Արցախյան հերոսամարտի մասնակից Աշոտ Մանուկյանի անունով:

Դպրոցը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետոեզիստրի տարածքային բաժնում 01.24.2003 թվականին (գրանցման համար՝ 271.210.02474) անժամկետ գործունեության:

- Դպրոցի հասցե՝ ք. Երևան Դավիթաշեն 5-րդ փողոց
 - դպրոցի մակերեսը՝ 11012.3քմ
 - կաթսայատուն՝ 57.6 քմ
 - հողատարածքի մակերեսը՝ 2.1409 հա
 - դպրոցը աշխատում է միահերթ, հնգօրյա աշխատանքային գրաֆիկով
 - դպրոցի էլեկտրոնային կայք՝ yerevan93.schoolsite.com
 - ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրված լիցենզիայի համաձայն դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ հանրակրթական ծրագրերը՝
- Տարրական /ընդհանուր 1 -ին աստիճան/- 360 սովորող ըստ լիցենզիայի, ներկայում սովորողների քանակը՝ 295
 - Հիմնական /ընդհանուր 2-րդ աստիճան /- 450 սովորող ըստ լիցենզիայի, ներկայում սովորողների քանակը՝ 336
 - միջնակարգ ընդհանուր /ընդհանուր 3-րդ աստիճան /- 160 սովորող ըստ լիցենզիայի, ներկայում սովորողների քանակը՝ 126

1.1 Շենքային պայմանների վերլուծություն

- ✓ Դպրոցն ունի 7 մասնաշենք, որից այս պահին գործում են 6-ը (1-ը տրված է քաղաքապետարանին՝ մանկապարտեզ կառուցելու նպատակով): Դպրոցն ունի դեպի դուրս բացվող պահուստային ելքեր՝ տարհանման սխեմայով, ունի հակահրդեհային համակարգ՝ լիցքավորված կրակմարիչներով և վահանակով: Հաստատության կահույքը մասամբ համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պայմաններին: Գույքի մի մասը բարվոք վիճակում է, սակայն կա նորացնելու կարիք: Դպրոցն ապահովված է մշտական ջրով, ունի ջեռուցման համակարգ, ուսուցչանոց, մարզադահլիճ (վերանորոգված), ՆԶՊ կաբինետ, հասնդիսությունների դահլիճ (մասամբ վերանորոգված), 9 սանհանգույց, նկուղ որը կարող է ծառայել նաև որպես ապաստարան և պահոց:
- ✓ **1-ին մասնաշենք** – եռահարկ, ունի ութ դասասենյակ, որից երեքը առաջին հարկում, 5 –ը երրորդ հարկում, մարզադահլիճը, նիստերի դահլիճը և բուֆետը՝ երկրորդ հարկում:
- ✓ **2-րդ մասնաշենք** – երկհարկանի, ունի 8 դասասենյակ, որից 4-ը՝ առաջին հարկում, 4-ը՝ երկրորդ հարկում:
- ✓ **3-րդ մասնաշենք** – երկհարկանի, ունի 8 դասասենյակ, որից 4-ը՝ առաջին հարկում, 4-ը՝ երկրորդ հարկում:
- ✓ **4-րդ մասնաշենք** – երկհարկանի, ունի 6 դասասենյակ, առաջին հարկում գրադարան և երեք կաբինետներ, երկրորդ հարկում երեք կաբինետներ:
- ✓ **5-րդ մասնաշենք** – երկհարկանի, ունի 8 դասասենյակ, ուսուցչանոց:
- ✓ **6-րդ մասնաշենք** – երկհարկանի, գործում է միայն երկրորդ հարկը 4 դասասենյակով, իսկ առաջին հարկը տրված է մասնավոր մանկապարտեզի:
- ✓ **7-րդ մասնաշենք** – տրված է քաղաքապետարանին՝ մանկապարտեզ կառուցելու նպատակով:
- ✓ Սանհանգույցները առաջին հարկում են:

Շենքային պայմանների ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն

Ուժեղ	Թույլ
<ul style="list-style-type: none"> • Հանդիսությունների դահլիճ՝ ապահովված գույքով և տեխնիկայով (տեսացրիչ, ձայնարկիչներ) 	<ul style="list-style-type: none"> • Դպրոցում չկա բնագիտական առարկաների լաբորատորիներ:
<ul style="list-style-type: none"> • Համակարգչային կաբինետ, որը զինված է 16 համակարգիչներով, 22 	<ul style="list-style-type: none"> • Դպրոցը չունի ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված առանձնացված

նոթքուքներով:	սենյակ կամ ռեսուրս- կենտրոն:
<ul style="list-style-type: none"> Մարգարադահլիճ՝ համապատասխան գույքով, հանդերձարեններով: 	<ul style="list-style-type: none"> Վերանորոգման կարիք ունեն միջանքների աստիճանները և 5-րդ մասնաշենքը:
<ul style="list-style-type: none"> Մարգահրապարակ 	<ul style="list-style-type: none"> Լավ չի գործում դպրոցի ջրահեռացման համակարգը, որի վատ աշխատանքի պատճառով խոնավանում են դասասենյակների պատերը և լրացուցիչ խնդիրներ է ստեղծում ձմռանը ջեռուցում ապահովվելիս:
<ul style="list-style-type: none"> Գրադարան 	<ul style="list-style-type: none"> Դպրոցը ունի ամբողջական ջեռուցման խնդիր, որը կապված մակերեսների մեծ լինելու և ֆինանսական ծախսերի հետ:
<ul style="list-style-type: none"> ՆՁՊ կաբինետ, որը ապահովված է 2 հրացաններով, որոնց համար պարբերաբար ձեռք է բերվում օդամղիչ, հրացանի փամփուշտներ: 	<ul style="list-style-type: none"> Մարգարադահլիճը ունի հանդերձարանների վերանորոգման և գույքի նորացման կարիք:
<ul style="list-style-type: none"> Բուժկետ 	<ul style="list-style-type: none"> Բուժկետը ապահովված չէ համապատասխան գույքով:
<ul style="list-style-type: none"> Հոգեբանի կաբինետ, որը նախատեսված է նաև ԿԱՊԿՌԻ երեխաների համար: 	<ul style="list-style-type: none"> Դպրոցը աշխատում է կաբինետային համակարգով, սակայն չունի առանձին հանդերձարան:
<ul style="list-style-type: none"> Շախմատի դասասենյակ՝ համապատասխան գույքով 	<ul style="list-style-type: none"> Դպրոցի բակի որոշ հատվածներ անբարեկարգ է, բարվոք վիճակում չեն դարպասները, բակի ետնամասը ունի բարեկարգման կարիք:
<ul style="list-style-type: none"> Նկուղ, որը կծառայի նաև որպես ապաստարան: 	<ul style="list-style-type: none"> Չի գործում բուֆետը:
<ul style="list-style-type: none"> Դպրոցի տանիքը հիմնանորոգված է: 	<ul style="list-style-type: none"> Դպրոցին պատկանող հողակտորների մի մասը անմշակ է:

1.2 Դպրոցի նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով ծրագրում եմ մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների՝ Ազգային ժողովի, Կրթության կառավարման լիազորված մարմնի, ՀՀ Պաշտպանության նախարարության, ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների, ՀՀ իրավապահ մարմինների, ՀՀ արդյունաբերողների, ՀԿ-երի և այլնի հետ:

Համագործակցելով պետական կառույցների հետ՝ լուծել դպրոցական շենքի վերանորոգման խնդիրը:

Դպրոցում նոր համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակների և այլ ժամանակակից սարքավորումների բացակայությունը թույլ չի տալիս ներդնել արդի աշակերտակենտրոն և ակտիվ մեթոդներ, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետորեն կազմակերպել ուսումնական գործընթացը: Այդ խնդիրները հաղթահարելու համար անհրաժեշտ է դպրոցը հագեցնել բավարար թվով համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակներով, ինչպես նաև ձեռք բերել հեռուստացույցներ և պրոյեկտոր:

Դպրոցի գերխնդիրն եմ համարում կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը: Սովորողների համար ստեղծել տեսական գիտելիքները գործնականում կիրառելու բավարար կարողություններ ու հմտություններ, նրանց տալ մասնագիտական գործունեության համար արդյունավետ կողմնորոշում:

Դպրոցը համալրված է համակարգիչներով և նոթբուքներով ունի մշտական ինտերնետային կապ:

Դպրոցի անվատանգության համակարգը ապահովված է տեսահսկվող սարքերով մուտքերի մոտ, միջանցքներում որը վերահսկվում տնօրենի աշխատասենյակում տեղադրված համակարգչի միջոցով:

Ուժեղ	Թույլ
<ul style="list-style-type: none"> Դպրոցն ապահովված ինտերնետային կապով, որը անխափան աշխատում է: 	<ul style="list-style-type: none"> Դպրոցի համակարգիչները բավականին հին են, դժվար է դրանցով աշխատելը:
<ul style="list-style-type: none"> Դպրոցն ունի 16 համակարգիչ և 22 նոթբուքներ: 	<ul style="list-style-type: none"> Դպրոցը չունի էլեկտրոնային գրատախտակ, նորարական ինժեներամաթեմատիկական լաբորատորիներ:
<ul style="list-style-type: none"> Դպրոցն ունի տպիչ սարքեր: 	<ul style="list-style-type: none"> Քիչ է դպրոցի տեսագրիչների և

	անվտանգության տեսախցիկների քանակը:
<ul style="list-style-type: none"> Դպրոցն ունի ձայնարկիչներ՝ իրենց բարձրախոսներով: 	<ul style="list-style-type: none"> Դպրոցը չունի էլեկտրոնային քարեզներ:
<ul style="list-style-type: none"> Դպրոցն ունի 6 տեսացրիչ: 	<ul style="list-style-type: none"> Դպրոցը չունի լուսային սարքեր, նյութատեխնիկական միջոցներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

1.3. Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Կառավարման խորհրդի և հաստատության տնօրենի համագործակցությունը վճռորոշ է արդյունավետ կառավարման և հաջող գործունեության համար: Այս համագործակցությունը երաշխավորում է, որ հաստատությունն առաջնորդվի ընդհանուր մոտեցումներով, ռազմավարական ուղղորդմամբ և ուժեղ առաջնորդությամբ:

Ստորև ներկայացված են «Ա. Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

- Կառավարման մարմինն ապահովում է վերահսկողություն և պատասխանատվություն է կրում տնօրենին դպրոցի արդյունավետ կառավարման համար ապահովելով քաղաքականության և կանոնակարգերի հավատարմությունը
- Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը թույլ է տալիս ռազմավարական որոշումներ կայացնել, որոնք համահունչ են դպրոցի տեսլականին, առաքելությանը և կրթական նպատակներին
- Միասին աշխատելով կառավարման մարմինը և տնօրենը որոշումներ են կայացնում ռեսուրսների բաշխման վերաբերյալ, ապահովելով միջոցների օպտիմալ օգտագործում և աջակցություն կրթական ծրագրերին:

Թույլ կողմեր

- Կառավարման մարմինը և տնօրենը ունեն տարբեր տեսլական և ընդհանուր նպատակներ դպրոցի համար
- Կառավարման մարմնի և տնօրենի միջև անբավարար հաղորդակցությունը

հանգեցնում է թյուրիմացությունների, որոշումների կայացման հետաձգման, գործողությունների սխալ դասակարգման

- Կառավարման մարմնի և տնօրենի միջև հեռանկարների, առաջնահերթությունների և մոտեցումների

Դպրոցում ձևավորված են և արդյունավետ գործում են դպրոցի կառավարման **խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, առարկայական մեթոդական միավորումները, ծնողական և աշակերտական խորհուրդները:**

Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմել է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը:


Դպրոցի կառավարման խորհուրդն աշխատանքներ է կազմակերպում իր աշխատակարգին համաձայն. պարբերաբար քննարկում է դպրոցի ֆինանսատնտեսական հարցերը, լսում է հաշվետվություններ դպրոցի ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության մասին, սահմանում է յուրաքանչյուր տարվա գործունեության ընթացքում առաջացած շահույթի բաշխման ուղղությունները և այլն:

Ծնողական խորհուրդը կատարում է իր պարտականությունները համապատասխան լիազորությունների շրջանակներում: Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի աշխատանքների առավել ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցելու միջոցով: «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օրենքով սահմանված կարգով: Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002 թ. Ապրիլի 23-ի N444 որոշման, իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով.

- նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այն դեպքում, երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց պարտականությունները, դպրոցում ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացներն էականորեն տուժում են: Դպրոցը դառնում է փակ, դպրոցում իրականացվող գործընթացները ուսուցիչների,

աշակերտների և համայնքի համար դառնում են անհասկանալի, և արդյունքում նրանց և դպրոցի միջև առաջանում է անվստահության մթնոլորտ:



Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհրդի, մեթոդամիավորման, ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի) գործունեությունը վերլուծելու համար գնահատենք նրանց ուժեղ և թույլ կողմերը.

Ուժեղ	Թույլ
<ul style="list-style-type: none"> Կուլեգիալ կառավարման մարմնի քարտեզի դերը աշխատանք Խորհրդակցական մարմինների աշխատանք համապատասխան հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի: Խորհրդակցական մարմինների ներգրավվածություն և հաստատության արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներում և սովորողների հանգստի ու ժամանցի կազմակերպման գործընթացում: 	<ul style="list-style-type: none"> Կուլեգիալ կառավարման մարմին-համայնք, խորհրդակցական մարմիններ-համայնք պասիվ համագործակցություն Խորհրդակցական մարմինների աշխատանքում նախաձեռնողականության պակաս Խորհրդակցական մարմիններ-դոնոր կազմակերպություններ համագործակցություն:

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը կազմակերպվում է ՀՀ հանրակրթության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, որը հիմնականում ներկայացված է հաստատության կանոնադրության մեջ:

Հաստատության կառավարման գործընթացը կազմակերպվում է կրթության պետական

կառավարման լիազորված մարմնի, լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի, կոլեգիալ կառավարման մարմնի (կառավարման խորհրդի), հաստատության տնօրենի (գործադիր մարմնի), մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի, մեթոդական միավորումներ (որոնք 7-ն են տարրական դպրոցի, բնագիտության, մաթեմատիկայի, պատմաաշխարհագրական, օտար լեզուների, հայոց լեզվի և գրականության, ֆիզկուլտուրա և տեխնոլոգիա) և աշակերտական խորհրդի կողմից :

1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը աշխատանքը հիմնականում կազմակերպում է նիստերի գումարման միջոցով: Նիստերն արձանագրվում են:

Կոլեգիալ կառավարման խորհրդի կազմը՝

Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ	Ծնողական խորհրդի ներկայացուցիչ	Երևանի քաղաքապետի ներկայացուցիչ		ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացուցիչ	
		Ազգանուն, անուն, հայարանուն	Պաշտոնը	Ազգանուն, անուն, հայարանուն	Պաշտոնը
Դանիելյան Գոհար Գագիկի	Խանդոյան Լիլիթ Վոլոդյայի	Խունդկարյան Անահիտ Վիլիկի	«Երևանի Դավիթաշեն վարչական շրջանի թիվ 40 գրադարան» ՀՈԱԿ, գրադարանավար	Միգախանյան Լուսինե Սամվելի	«Երևանի Ա. Նավասարդյանի անվան հ.196 հ/դ» ՊՈԱԿ, հոգեբան
Գրիգորյան Տանյա	Դաշտոյան Արթուր	Հարությունյան Մարիամ	Երևանի Դավիթաշեն	Թևանյան Ալվարդ	«Ստեփան Ջրբաշյանի

Արարատի	Նորայրի	Արտաշի	վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաձատար մասնագետ	Զարգանդի	անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ ազգային նվագարանների բաժնի վարիչ
---------	---------	--------	--	----------	--

Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է անխռով համագործակցողին փոխըմբռնման գործելաոճով: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը , խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Գումարված նիստերն արձանագրվում են կառավարման խորհրդի քարտուղարի կողմից:

Կառավարման խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Աջակցել է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկել է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսել է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և սովել եզրակացություն
- Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները
- Հաստատել է նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա տնօրենի կողմից մշակված դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը
- Քննարկել է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները
- Քննարկել է ներքին գնահատման արդյունքները
- հաստատել է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրել խորհրդի նախագահ և քարտուղար:

Մանկավարժական խորհրդի աշխատանքները ևս կազմակերպվում են նիստերի

գումարման միջոցով: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում կարելի է նշել, որ խորհուրդը միջին հաշվարկով գումարում է տարեկան 11 նիստ (հերթական և արտահերթ): Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է անխոռվ համագործակցողին գործելառճով: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվի առնելով աշխատողի պաշտոնային պարտականությունները և աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքի ուղղությունները: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը, ով ի պաշտոնե հաստատության տնօրենն է: Գումարված նիստերն արձանագրվում են մանկավարժական խորհրդի քարտուղարի կողմից:

Հաստատության մանկավարժական խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում, ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով
- Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամ են
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է հանրակրթության պետական չափորոշիչի պահանջների համաձայն հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի դիմումի համաձայն
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ուսումնական խմբակների, երկարօրյա խմբերի ստեղծման հարցերը
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է հաստատության ուսումնական պլանի նախագիծը
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է ուսումնադաստիարակչական

աշխատանքների տարեկան պլանի նախագիծը և հաշվետվությունը

- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա սևագրությունը սահմանելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել դպրոցի շրջանավարտներին հիմնական կրթական մակարդակի պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացրել է տնօրենին հաստատման մասին:

Հաստատությունում գործում են **մեթոդական միավորումներ** որոնք 7-ն են

- **տարրական դպրոցի,**
- **բնագիտության,**
- **մաթեմատիկայի,**
- **պատմաաշխարհագրական,**
- **օտար լեզուների,**
- **հայոց լեզվի և գրականության,**
- **ֆիզկուլտուրա և տեխնոլոգիա,** որոնցից յուրաքանչյուրի աշխատանքը

կազմակերպվում է տվյալ մեթոդմիավորման նախագահի և անդամների համագործակցությամբ:

Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում, կարելի է նշել որ ամեն մեթոդմիավորում միջին հաշվարկով գումարում է

հերթական և անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ նիստեր: Մեթոդափավորումների աշխատանքները կազմակերպվում են մեթոդափավորման նախագահի տարեկան աշխատանքային պլանով, որը ուսումնական տարվա սկզբին հավանության է արժանանում մանկավարժական խորհրդի կողմից և գործածության մեջ է դրվում հաստատության տնօրենի հերթական հրամանով: Հաստատությունում կիսամյակային պարբերականությամբ կատարվում է մեթոդական միավորումների կողմից կազմակերպված աշխատանքների հաշվետվողականություն: Մեթոդական միավորումների աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են մեթոդական միավորումների քարտուղարների կողմից:

Հաստատության մեթոդական միավորումների գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Քննարկել է մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված մեթոդական միավորման կազմում ընդգրկված ուսումնական առակաների հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տվել երաշխավորություններ
- Քննարկել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը
- Նպաստել է ուսուցիչների (դասվարների) մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը
- Կազմակերպել է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ, սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ
- Մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն
- Կազմակերպել է դպրոցական առարկայական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ

Հաստատության **ծնողական խորհրդի** աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվի առնելով աշխատողի պաշտոնային պարտականությունները և աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքի ուղղությունները: Ծնողական խորհրդի աշխատանքը վերահսկում է

հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից:

Հաստատության ծնողական խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրել է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուներ
- Դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ
- Աջակցել է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում
- Լսել է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին և ստացել ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները
- Ծնողներին ներգրավվել է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում
- Աջակցել է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

Դպրոցի **աշակերտական խորհրդի** աշխատանքները ևս կազմակերպվում են նիստերի միջոցով: Այն սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն սովորողական խորհուրդն է, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում, կարելի է նշել որ խորհուրդը միջին հաշվարկով գումարում է տարեկան 2-4 նիստեր խորհրդի աշխատանքային պլանին համապատասխան: Աշակերտական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից:

Հաստատության աշակերտական խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Աջակցել է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացում ներգրավվելու գործընթացում
- Լսել է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին և ստացել սովորողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները
- Ներգրավվել է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում
- Աջակցել է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

1.5 Հաստատության համագործակցությունը առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Ստորև ներկայացված Գծապատկերը արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:



Ա. Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի և հաստատության տնօրենի համագործակցությունը վճռորոշ է արդյունավետ կառավարման և հաջող գործունեության համար: Այս համագործակցությունը երաշխավորում է, որ

հաստատությունն առաջնորդվի ընդհանուր ռազմավարական և ուժեղ առաջնորդությամբ:

Ուժեղ կողմեր

- Կառավարման խորհուրդը ապահովվում է վերհսկողություն և պատասխանատվություն է կրում դպրոցի տնօրենի արդյունավետ կառավարման համար, ապահովվելով կանոնակարգերը:
- Տնօրենի և կառավարման խորհրդի համագործակցությունը թույլ է տալիս ռազմավարական որոշումներ կայացնել, որոնք համահունչ են դպրոցի առաքելությանը և կրթական նպատակներին:
- Միասին աշխատելով կառավարման մարմինը և տնօրենը որոշումներ են կայացնում ռեսուրսների բաշխման վերաբերյալ, ապահովելով միջոցների օպտիմալ օգտագործում և աջակցություն կրթական ծրագրերին:

Թույլ կողմեր

- Էլ ավելի արդյունավետ կարող է լինել համագործակցությունը, եթե կառավարման մարմինը և տնօրենը ունենան միևնույն նպատակները դպրոցի համար:
- Ցանկալի է կառավարման խորհրդի և տնօրենի միջև հաղորդակցությունը լինի ավելի հաճախակի, որը կհանգեցնի որոշումների կայացման և գործողությունների ճիշտ դասակարգմանը:
- Կառավարման մարմնի և տնօրենի միջև համագործակցության համար ընդհանուր հիմքեր գտնելու հարցում, կարևոր է հեռանկարների, առաջնահերթությունների և մոտեցումների քննարկում և համաձայնեցում:

Դպրոցի և տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների միջև համագործակցությունը կենսական դեր է խաղում աջակցող և հարստացող կրթական միջավայր ստեղծելու գործում:

Ստորև ներկայացված են Ա, Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ և տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը.

Ուժեղ կողմեր

- Համայնքի ներգրավվածությունը ծնողական համայնքի հետ համագործակցությունը խթանում է ակտիվ ներգրավվածությունը, մասնակցությունը և համատեղ պատասխանատվությունը սովորողների կրթության և բարեկեցության համար ստեղծելով համայնքի ավելի ուժեղ

աջակցություն դպրոցում

- Կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը արձանագրված փորձ է, ուղեցույց և լավագույն գործունեության հնարավորություն կրթադաստիարակչական աշխատանքները և քաղաքականությունը բարելավելու ուղղություններով:

Թույլ կողմեր

- Ռեսուրսների փոխանակման և աջակցության բացակայություն, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ ոչ համակողմանի համագործակցությունը (համագործակցության բացակայությունը) խափանում է լրացուցիչ ռեսուրսների, ֆինանսավորման, փորձաքննության և դպրոցի ծրագրերի և նախաձեռնությունների համար աջակցությունը
- Դպրոցի և շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության սահմանափակության կամ բացակայության պատճառով խաթարվում է հաստատության նպատակային գործունեությունը
- Ուժերի անհավասարակշռությունը կամ շահագրգիռ կողմերի միջև տարբեր շահերը հանգեցնում են կոնֆլիկտների, որոշումների կայացման դժվարությունների և դպրոցի կարիքների ու առաջնահերթությունների անբավարար ներկայացմանը:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.

➤ Մանկավարժական համակազմ

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման: Չափանիշներ կարող են լինել օրինակ՝

1. Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:
2. Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
3. Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

4. Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:
5. Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:
6. Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսուժասկան և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսուժասիրում է գոյություն ունեցող փորձը և տարածում է իրենը:
7. Գիտի տարիքային հոգեբանությունը:
8. Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:
9. Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Դպրոցի մանկավարժական համակարգի որակական բարելավումը համարում ենք դպրոցի **նազմավարություններից** մեկը: Այն ենթադրում է ՀՀ կառավարության 14.10.2010 թ. N 1391- Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում, այսինքն՝

- Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:
- Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:
- Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:
- Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:
Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:
- Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել ոչ միայն նոր համակարգիչներ, այլև էլեկտրոնային գրատախտակ,
- Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից: Այդ նպատակով կազմակերպել դասընթացներ: Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով (armedu.am, edu.am, aniedu.am, dasaran.am և այլն):
- Մշակել կազմակերպման և ղեկավարման մեխանիզմներ՝ ուղղված մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը,
- Կազմակերպել անհրաժեշտ օգնություն առարկայական մեթոդափոխումների նախագահներին՝ կազմելու մեթոդափոխումների տարեկան աշխատանքային պլանները՝ ելակետ ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության հրահանգներն ու ցուցումները:
- Ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել և մշակել մանկավարժական մամուլում տեղ գտած առարկայական և մեթոդամանկավարժական նորությունները և դրանք քննարկել առարկայական մեթոդափոխումների նիստերում. յուրաքանչյուր նիստում լսել մանկավարժական մամուլի տեսություն:

- Ինքնակրթության մակարդակը բարձրացնելու նպատակով յուրաքանչյուր ուսուցչի հանձնարարել տարվա ընթացքում նախապատրաստել մեթոդական զեկուցումներ: Թեմատիկ այդպիսի զեկուցումները լսել և քննարկել համապատասխան մասնախմբերի նիստերում:
- Դասալսումների միջոցով մանկավարժներին ցույց տալ մեթոդական օգնություն: Ուսումնասիրել աշխատանքի առաջավոր փորձը և տարածել դպրոցում:
- Աջակցել մանկավարժներին՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու նյութեր՝ իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

Դպրոցի զարգացման ծրագրի գլխավոր նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է դպրոցում ձևավորել բանիմաց, ժամանակակից կրթական պահանջներին համընթաց քայլող, պատրաստակամ մանկավարժների, այլ ոչ դասատուների, հզոր թիմ, որը կկարողանա իրականացնել դպրոցի որդեգրած քաղաքականությունը: Դպրոցի մանկավարժական համակազմի որակը բարելավելու նպատակով սահմանվում են հետևյալ ***խնդիրները***.

- բարձրացնել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը,
- ստեղծել մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացման մեխանիզմներ,
- աջակցել մանկավարժներին՝ մշակել, ներկայացնել և տպագրել հոդվածներ, իրենց աշխատանքների արդյունքների վերաբերյալ մեթոդական նյութեր,
- խթանել մանկավարժների հետազոտական աշխատանքների կատարումը,
- ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:

➤ ***Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.***

- Դպրոցի ավելի փորձառու մանկավարժների դասավանդման արդյունավետ մեթոդները նորի հետ համադրելով՝ դրանք փոխանցել երիտասարդ մանկավարժներին՝ բաց դասերի, օգտավետ գրույցների, փորձի փոխանակման միջոցով:
- Օգտվելով ուսուցիչների՝ ներկայումս գործող վերապատրաստման ծրագրերից՝ դպրոցի մանկավարժներին պարբերաբար տեղեկատվություն տալ ժամանակակից մեթոդների վերաբերյալ:
- Ուսուցիչների վերապատրաստումը նպատակաուղղել նաև համակարգչային գիտելիքների և օտար լեզվի իմացության ամրապնդմանը:
- Ստեղծել բարենպաստ պայմաններ դպրոցի մանկավարժների ինքնակրթության համար, ապահովել նրանց ուսումնական ծանրաբեռնվածության մակարդակը:
- Համագործակցել երևանյան դպրոցների և արտասահմանյան կրթական հաստատությունների հետ, ինչը կնպաստի դպրոցի կառավարման և ուսումնական ոլորտներում փորձի փոխանակմանը, ինչպես նաև ուսուցիչների և աշակերտների փոխանակման ծրագրերի իրականացմանը:

- Մշտապես կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ինչպես մանկավարժական բուհերում, այնպես էլ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության կառույցներում: Վերապատրաստումն իրականացնել երկու ուղղությամբ. մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը նպաստելու և ատեստավորման նպատակով:
- Պարբերաբար ուսումնասիրել վերապատրաստում անցած ուսուցիչների մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը: Ըստ կարգի յուրաքանչյուր տարի ատեստավորման ուղարկել մանկավարժական աշխատողների 20%-ին:
- Մշտապես վերլուծել դպրոցի մանկավարժական որակական կազմը:
- Մանկավարժական գործունեությունը նպատակաուղղել նրան, որ յուրաքանչյուր սովորող գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը: Նա պետք է հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, գիտակցի, որ կրթությունը մեծագույն արժեք է, կարևորի բարոյական չափանիշները և գեղագիտական արժեքները, գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, դրսևորի աշխատասիրություն, արժևորի և գնահատի սեփական և այլոց աշխատանքը, անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:

➤ **Մանկավարժական համակազմի որակական բարելավման ակնկալվող արդյունքներն են՝**

- որակավորված և մոտիվացված մանկավարժական կոլեկտիվ,
- աշակերտակենտրոն և արդյունավետ ուսումնական գործընթաց,
- մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում,
- մանկավարժների հետազոտական ակտիվացված գործունեություն:

Ստորև ներկայացված են «Ա. Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ի մանկավարժական համակազմերը և մասնագիտական որակների ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

- Մանկավարժական համակազմը արդյունավետորեն կառավարում է դասարանի միջավայրը ստեղծելով դրական, ներառական և կարգապահ մթնոլորտ:
- Ըստ կարիքների ուսուցիչները կարողանում են բավարարել սովորողների ուսուցման բազմազան կարիքները, հարմարեցնելով նրանց ուսուցման մեթոդներն ու նյութերը անհատական ուժեղ կողմերին, հետաքրքրություններին:
- Մանկավարժական համակազմը ներգրավված է շարունակական

մասնագիտական զարգացման միջոցառումներում

- Ուսուցիչները կարողանում են իրականացնել դասերի պլանավորում, ուսուցում, դասարանի կառավարում և ուսումնառության գնահատում
- Մանկավարժական համակազմը ունի ակադեմիական կարողություններ և փորձ համապատասխան առարկայական ոլորտներում, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթաց և ուղղորդել սովորողներին:

Թույլ կողմեր

- Ցանկալի է ուսուցիչները ունենան բավարար մշակութային տեղեկատվություն, ինչը կհանգեցնի ներառական և մշակութային ուսումնական միջավայրեր ստեղծելու հնարավորություն:
- Ցանկալի է ուսուցիչների կողմից չսահմանափակվել թվային գործիքների և ռեսուրսների օգտագործմամբ
- Ուսուցիչներ հաճախ բախվում են սովորողների անհատական ուսուցման կարիքները արդյունավետորեն բավարարելու դժվարությունների հետ, ինչը հանգեցնում է ակադեմիական առաջադիմության և ներգրավվածության անկման (սովորողների թիվը սահմանաչափավ նախատեսվածից ավելին լինելու պատճառով):
- Սովորողների ուսումնառության գնահատման գործընթացում կարող են լինել անհամապատասխանություններ, ներառյալ ոչ նպատակային գնահատման ռազմավարությունների կիրառումը

➤ Աշակերտական համակազմը

Պետական դպրոցի տնօրենը պարտավոր է սովյալ տարածքում բնակվող երեխաներին (սովորողներին) ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ: Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում:

Աշակերտները ոչ միայն մտավոր, այլև սոցիալական և հուզական (էմոցիոնալ) անհատականություններ են, և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա: Որպեսզի հասկանանք, թե ովքեր են մեր աշակերտները, պետք է հաշվի առնենք՝

1. նախնական գիտելիքները,
2. մտավոր զարգացումը,
3. մշակութային դաստիարակությունը,
4. զարգացվածությունը և զարգանալու հույսերը(սպասելիքները):

Դպրոցի *նպատակներից են՝* զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների նախնական գիտելիքները որոշելու, սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար, դպրոցում ներդնել հոգեբանական ծառայություն՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:

Դպրոցի աշակերտական համակազմը հիմնականում Դավիթաշեն վարչական տարածքի բնակիչների երեխաներ են:

➤ Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործում և ուսումնական միջավայրի բարելավում

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործումն ուղղակիորեն կապված է ուսումնական միջավայրի բարելավման գործընթացների հետ: Սովորողների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը նպաստելու նպատակով ծրագրում են դպրոցում ստեղծել համապատասխան կրթադաստիարակչական միջավայր, որի հիմնական նպատակներն են՝

- սովորողների և ուսուցիչների առողջ կենսագործունեության ապահովում,
- տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում՝ մանկավարժների մասնագիտական զարգացման, նոր մեթոդների կիրառման և ուսումնական գործընթացն ակտիվացնելու նպատակով,
- դասասենյակների, առարկայական կաբինետների ու լաբորատորիաների արդիականացում և համակարգչային վերազինում:

Մարդկային ռեսուրսներ - 2023

2023		
Մանկավարժների ընդհանուր թիվ	36	5 վարչական
Սովորողների թիվը	735	
Բարձրագույն կրթության ուսուցիչների	36	

Տարրակարգ ունեցող ուսուցիչներ	1	
Կամավոր ատեստավորում ունեցող ուսուցիչ	3	
Համատեղությամբ աշխ. ուսուցիչներ	0	
Ուսուցիչ/սովորող փոխհարաբերություն	$735/36 = 20$ աշ.	
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածություն	16 ժամ	
Առարկայական մեթոդմիավորումներ	7	
Սպասարկող անձնակազմ	10	
Սպասարկող անձնակազմ/ աշակերտ հարաբերակց.	$736/10 = 70$ աշ.	
Հաշվապահ	1	
Օպերատոր	1	
Սոցիալական մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, ուսուցչի օգնական	5	


- **Հաստատության մարդկային ռեսուրսներ, տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ**

55 և բարձր՝ 9 ,

մինչև 30 տարեկան՝ 2,

30-40 տարեկան՝ 12,

40-55 տարեկան՝ 13



- Հաստատության մարդկային ռեսուրսներ.տվյալներ հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Արմեն Շիրակի Թորոսյան	20 տարի	20 տարի	
Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	Հասմիկ Վրեժի Հախոյան	29 տարի	29 տարի	

Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	Քնարիկ Վազգենի Դավթյան	2 տարի	46 տարի	
Տնօրենի տեղակալ մասնագիտական աջակցությունների գծով	Գայանե Արայիկի Ստեփանյան	5 տարի	2 տարի	
ՍԴԱԿ	Լուսինե Էմիլի Մանուկյան	8 տարի	8 տարի	
Հաշվապահ	Լեյլա Անդրանիկի Գրիգորյան	20 տարի	20 տարի	

➤ Տվյալներ ուսուցչական կազմի և նրանց գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)	36 100%
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, ըստ մասնագիտության դասավանդող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)	36 100%
Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, տարակարգ ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)	1 2,7 %
Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)	0

<p>Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, վերապատրաստում անցած հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)</p>	<p>8 22.2%</p>
<p>Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, վերապատրաստման դասընթաց ընդհանուր թվին վարող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)</p>	<p>0</p>
<p>Ուսուցիչների միջին տարիքը (հաշարկ. հաստատության բոլոր ուսուցիչների տարիքների գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)</p>	<p>43</p>
<p>Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, վերապատրաստման դասընթաց վարող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)</p>	<p>0</p>
<p>Ուսուցիչների միջին տարիքը (հաշարկ. հաստատության բոլոր ուսուցիչների տարիքների գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)</p>	<p>43</p>

<p>Միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը. (տոկոսի հաշվարկ, հոդվածներ և վերը նշված</p>	<p>0</p>
<p>Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, դասավանդման աշակերտակենտրոն, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և կիրառող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)</p>	<p>25 69.4%</p>
<p>Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ, ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ)</p>	<p>36 100 %</p>
<p>Մովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը</p>	<p>12 33.3 %</p>
<p>Ուստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը</p>	<p>30</p>
<p>Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը</p>	<p>60</p>

1.6 Օգտատործվող SՀS և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, SՀS-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն ըստ իր զարգացման առաջնահերթությունների ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

Այս հիմնախնդիրները **լուծելու նպատակով** հարկ ենք համարում SՀS-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

- Ռիսկ, նոր մշակված զարգացման ծրագիրը կարող է լիարժեք չհամապատասխանել դպրոցի ուսումնական ծրագրերի նպատակներին, դասավանդման մեթոդաբանությանը կամ կրթական փիլիսոփայությանը (քանի որ զարգացման ծրագիրը հավակնորդը մշակում է հաստատության կողմից տրված փաստացի տեղեկատվության այլ ոչ իրականում գործունեության հիման վրա):
- Ռիսկը մեղմացնող գործողություն, կներգրավվեն ուսումնական ծրագրի փորձագետներ և լիազորված մարմնի ներկայացուցիչներ աշխատանքների պլանավորման գործընթացում
- Սահմանափակ մատչելիություն և ներառականություն.
- Ռիսկ, հաստատության ոչ լիարժեք հարմարեցումների արդյունքում հաշմանդամություն ունեցող կամ ԿԱՊԿՈւ սովորողների սւեղաշարումը կհանգեցնի սահմանափակ հասանելիության և ոչ ներառականության
- Ռիսկը մեղմացնող գործողություն. ուսումնադաստիարակչական գործընթացում կկիրառվեն ուսուցման համընդհանուր դիզայնի սկզբունքներ բոլոր սովորողների համար մատչելիություն ապահովելու նպատակով: Կկազմակերպվի խորհրդակցություն և շարունակական համագործակցություն տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ, ներառական կրթության փորձագետների հետ սովորողների առանձնահատուկ կարիքները բավարարելու նպատակով, կհամալրվեն համապատասխան օժանդակ տեխնոլոգիաները և կկազմակերպվեն անձնակազմի վերապատրաստումներ ներառական կրթության գործնական կարողունակությունների զարգացման վերաբերյալ ներառական ուսուցման միջավայր ստեղծելու նպատակով
- Համայնքի ներգրավվածություն և գործընկերություն.
- Ռիսկ, համայնքի ոչ համարժեք ներգրավվածությունը և արտաքին կազմակերպությունների հետ սահմանափակ գործընկերությունը կարող են խոչընդոտել դպրոցի լիարժեք գործունեությանը
- Ռիսկը մեղմացնող գործողություն. կմշակվի համայնքի ներգրավվածության ռազմավարություն պլանավորման և իրականացման գործընթացում ծնողներին, համայնքի անդամներին և շահառու կազմակերպություններին ներգրավելու նպատակով:

Վարչատնտեսական աշխատանքների կառավարում

- Զարգացման ծրագրի անբավարար պլանավորում և կառավարում.
- Ռիսկ. Ծրագրի ոչ համարժեք պլանավորումն ու կառավարումը կարող են հանգեցնել անարդյունավետ որոշումների կայացման, հաշվետվողականության բացակայության և ծրագրերի թերակատարման (կամ չկատարման)
- Ռիսկը մեղմացնող գործոնություն, կմշակվի զարգացման ծրագրի իրականացման համակողմանի պլան, կսահմանվեն հստակ պաշտոնային պարտականություններ, կներդրվեն ծրագրի կառավարման արդյունավետ մեխանիզմներ, կկազմակերպվեն կանոնավոր հանդիպումներ առաջընթացը վերահսկելու համար և կապահովվեն արդյունավետ հաղորդակցություն ու համագործակցություն շահագրգիռ կողմերի միջև
- Գնումների և պայմանագրերի կառավարման մարտահրավերներ.
- Ռիսկ, գնումների ոչ պատշաճ գործելաոճը, պայմանագրերի անարդյունավետ կառավարումը կամ գնումների կանոնակարգերին անհամապատասխանությունը կարող են հանգեցնել ուշացումների, բյուջեի գերակատարման և իրավական վեճերի
- Ռիսկը մեղմացնող գործոնություն. կկազմակերպվի գնումների թափանցիկ գործընթաց, հետևելով գնումների գործընթացի կազմակերպման կանոնակարգերին, կիրականացվի մատակարարների մանրակրկիտ գնահատումներ, պայմանագրերը կկնքվեն հստակ պայմաններով և կանոնավոր կերպով կվերահսկվեն ու կգնահատվեն գնումները
- Ֆինանսական ռիսկերը և բյուջեի սահմանափակումներ.
- Ռիսկ, անբավարար ֆինանսավորումը, բյուջեի ոչ ճշգրիտ գնահատումները կամ չնախատեսված ծախսերը կարող են հանգեցնել բյուջեի սահմանափակումների վտանգելով զարգացման ծրագրի կատարողականի ծավալներն ու որակը
- Ռիսկը մեղմացնող գործոնություն. կիրականացվի համակողմանի ֆինանսական վերլուծություն և տեխնիկատնտեսական հիմնավորում, կմշակվի իրատեսական բյուջեի հիմնված ծախսերի ճշգրիտ գնահատումների վրա, կստեղծվի ֆինանսական մշտադիտարկման համակարգ ծրագրի ծախսերին հետևելու, ծախսերի վերահսկման այսպիսով միջոցառումներ իրականացնելու և ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ ապահովելու և պատակով
- Մարդկային ռեսուրսների կառավարման մարտահրավերներ
- Ռիսկ, անբավարար անձնակազմը, արհեստավարժ մասնագետների պակասը կամ հավաքագրման, պահպանման և վերապատրաստման հետ կապված խնդիրները կարող են ազդել դպրոցի զարգացման ծրագրի և պաշտոնային պարտականությունների կատարման վրա
- Ռիսկը մեղմացնող գործոնություն. կիրականացվի մարդկային ռեսուրսների համակողմանի գնահատում, կներգրավվի անհրաժեշտ փորձառությամբ համապատասխան անձնակազմ, կապահովվեն անհրաժեշտ վերապատրաստման և մասնագիտական զարգացման հնարավորություններ, կներդրվի արդյունավետ կառավարման համակարգեր պահպանելով անձնակազմի հետ հաղորդակցության բաց ուղիները աշխատանքը արդյունավետ կազմակերպելու նպատակով:

- Շահագրգիռ կողմերի կառավարում և հաղորդակցություն
- Ռիսկ. շահագրգիռ կողմերի ոչ արդյունավետ կառավարումը և վատ հաղորդակցությունը կարող են հանգեցնել թյուրիմացությունների, փոփոխությունների դիմադրության և որոշումների կայացման հետաձգման
- Ռիսկը մեղմացնող գործողություն. կմշակվի շահագրգիռ կողմերի ներգրավվածության և հաղորդակցման պլան, կբացահայտվեն հիմնական շահագրգիռ կողմերը և նրանց շահերը, կհաստատվեն կանոնավոր հաղորդակցման ուղիներ, կկատարվի զարգացման ծրագրի լրամշակում, ժամանակին կլուծվեն մտահոգությունները և շահագրգիռ կողմերը կներգրավվեն որոշումների կայացման գործընթացներում:

8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Դսլրոցում նյութատեխնիկական միջոցների պլանավորման համակարգը կարող է ապահովել նյութական ռեսուրսների և ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ, հաշվետու, թափանցիկ և համագործակցային օգտագործումը:

Ներկայացնենք զարգացման ծրագրում սահմանված գործողությունների իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները ըստ ուղղությունների (զարգացման ծրագրում հավասարաչափ և արդյունավետ օգտագործել են մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսները):

- Կարիքների գնահատում.
 - Բացահայտել կարիքները, իրականացնել դպրոցի նյութատեխնիկական կարիքների համակողմանի գնահատում՝ հաշվի առնելով ենթակառուցվածքները, սարքավորումները, պարագաները և տեխնոլոգիական պահանջները
 - Կարիքների առաջնահերթություն. սահմանել բացահայտված կարիքների առաջնահերթությունը հիմնվելով հրատապության անհրաժեշտության վրա
- Բյուջե և ֆինանսավորում.
 - Բյուջեի բաշխում, մշակել բյուջեավորման թափանցիկ գործընթաց,
 - Ֆինանսավորման աղբյուրներ,
 - Ֆինանսական հաշվետվողականություն.
 - Ռեսուրսների արդյունավետ կառավարում,
 - Համագործակցություն.
 - Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն.
 - Խթանել համագործակցությունը
 - Կատարողականի գնահատում, պարբերաբար գնահատել նյութական և տեխնիկական միջոցների այսպիսով տեսչությունն ու ազդեցությունը ուսումնառության արդյունավետության, սովորողների ներգրավվածության և դպրոցի ընդհանուր

գործունեության վրա

- Հետադարձ կապի մեխանիզմներ, հավաքել ուսուցիչների, սովորողների և անձնակազմի կարծիքները նյութական ռեսուրսների համապատասխանության, գործունակության և որակի վերաբերյալ և օգտագործել տրված հետադարձ կապը ապագա պլանավորման և որոշումների կայացման նպատակով:
- Գնահատման արդյունքների, շահագրգիռ կողմերի հետադարձ կապի և առաջացող կարիքների վրա հիմնված նյութատեխնիկական միջոցների պլանավորման համակարգի կանոնավոր վերանայումը կօգնի ապահովել դպրոցի նյութական ենթակառուցվածքի արդյունավետ բաշխումը, արդյունավետ օգտագործումը և կայուն զարգացումը:

Այս համակարգը նպաստում է թափանցիկությանը, հաշվետվողականությանը և համագործակցությանը նյութական ռեսուրսների և ֆինանսավորման աղբյուրների օգտագործման հարցում աջակցելով դպրոցին սովորողների և մանկավարժների համար ուսումնական բարենպաստ միջավայր ապահովելու գործում:

9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրում նախատեսվել են վերահսկողության մեխանիզմներ

Դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել վերահսկողության մեխանիզմներ, որոնք վերահսկում են առաջընթացը, գնահատում են արդյունքները և անհրաժեշտության դեպքում դյուրացնում են ճշգրտումները:

- Ծրագրի հստակ նպատակներ ու ցուցանիշներ.
 - Սահմանել հստակ նպատակներ
 - Սահմանել կատարողականի բնութագրիչներ,
- Մշտադիտարկում և հաշվետվություն.
 - Կանոնավոր առաջընթացի մշտադիտարկում.
 - Տվյալների հավաքագրում և վերլուծություն.
- Գնահատում և հետադարձ կապ.
 - Արտաքին և ներքին գնահատումներ,
 - Շահագրգիռ կողմերի հետադարձ կապ.
 - Հետադարձ կապի օղակներ.
- Վերանայում և հստակեցում.
- Գործողությունների պլաններ.
- Առաջնորդության աջակցություն.
- Ծրագրում ներկայացված պատասխանատուները հնարավորինս պետք է փնտրեն ուղիներ ապահովելու ծրագրի կատարման նպատակով պլանավորված գործողությունների համար անհրաժեշտ լիազորություններ, ռեսուրսներ և աջակցություն այն արդյունավետ իրականացնելու և ցանկացած մարտահրավեր հաղթահարելու նպատակով
- Շարունակական բարելավում.
- Զարգացնել շարունակական բարելավման մշակույթը խրախուսելով նորարարությունները, ներդնել արդյունավետ փորձը, որը բացահայտվել է վերահսկողության մեխանիզմների միջոցով:

ԵԶՐԱՓՈՒՄ

Մեծապես կարևորելով պատասխանատվության աստիճանը, տնօրեն ընտրվելու դեպքում ես տեղ եմ տալու խորհրդակցական մարմինների հետ ավելի սերտ աշխատանքին՝ առաջնորդվելով դպրոցի կառավարման ժողովրդավարական ոճով և բարձրացնելու կառավարման արդյունավետությունը:

Ես խորապես համոզված եմ, որ տնօրենը ժամանակակից ուսումնական հաստատությունում ուսուցիչների ղեկավար է, թիմի առաջնորդ, գաղափարակից, միևնույն ժամանակ՝ աշակերտների ու ծնողների գործընկերն է, ում հետ նրանք կարող են խոսել իրենց ներկայի և ապագայի, ծրագրերի ու խնդիրների մասին, ով կարող է նրանց աջակցել ոչ միայն ուսումնական գործընթացում, այլև նրանց հետագա կրթություններում:



«Երևանի Ա. Մանուկյանի անվ. հ. 93
միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028
թվականների զարգացման ծրագիր

Դպրոցի տնօրենի հավակնորդ՝ Տաթևիկ Արմենի Մանուկյան

Բովանդակություն

. Հաստատության գործունեությունը	3
Չարգացման ծրագրի նպատակները	4
Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում	5
բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին	5
գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին	Error! Bookmark not defined.
Դպրոցի ներկա վիճակի վերլուծություն	7
շենքային պայմաններ	8
Շենքային պայմանների ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն	8
1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն	311
Դպրոցի խորհրդակցական մարմինները.....	14
Մանկավարժական համակազմ	Error! Bookmark not defined. 7
Առարկայական մեթոդիավորումներ	19
Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները	12
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	277
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն	31
Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը և դրանց վարումը	35
Կրթության որակը	36
Ուսումնական միջավայրը.....	46
5. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու նորարությունը	50
Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակ	52
Բազմակարծիք ներառական, մասնակցային արժեքներ	76
Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակն ու խնդիրները.....	55
Ծրագրի կատարման գնահատման չափանիշները, վերահսկողությունը.....	76

. Հաստատության գործունեությունը

Հաստատությունն իրականացնում է միջնակարգ կրթություն: Հաստատությունն համայնքի առաջատար դպրոցներից է : Ունի ուրույն դիմագիծ, ներքին խիստ պահպանվող կարգապահական կանոններ, աշակերտների թվի շարունակական աճ և նայելով համայնքի շարունակական համալրմանն ու բարգավաճմանը՝ դպրոցի գործունեությունն ավելի է արժևորվում և ապագայի կայուն տեսլական ձեռք բերում: Հենց ապագայի վառ տեսլականով էլ կազմվել է դպրոցի զարգացման հինգամյա ծրագիրը:

Դպրոցի զարգացման ծրագիրը հաստատության ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը հաստատությունում:

«Երևանի Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. զարգացման ծրագիրը մշակվել է ՀՀ «Կրթության մասին օրենք», ՀՀ «Հանրակրթության մասին օրենք», ՀՀ օրենք « ՊՈԱԿ-ի մասին », ՀՀ օրենք «Երեխաների իրավունքների մասին օրենք», ՀՀ օրենք «Լեզվի մասին» , Ուսումնական հաստատության կանոնադրություն կետերի իրավական հիմքերով և 22.09.2022թ. ԿԳՄՍ նախարարի N35-ն հրամանի համապատասխան՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

Կրթությունը ցանկացած ազգի հիմնասյուններից է : Եվ այդ հիմնասյունն իրենց ուսերին ավելի շատ պահում են կրթության ոլորտի աշխատողները ճկուն, գաղափարական ու նորարարական մոտեցումներով: Ժամանակակից աշխարհը փոփոխվում և զարգանում է աննկարագրելի տեմպերով. կրթության մեջ ևս փոփոխություններն ու զարգացումը անկասելի են:

Կրթության մեջ խոսքերը կարող են շնչալից լինել, բայց միայն կատարված աշխատանքը կարող է պտուղներ տալ եւ կայուն ու զարգացած պետության առաջընթաց գրանցել: Միայն կիրթ հասարակության ձեւավորումն է բերելու առաջընթացի ու ամուր պետականության պահպանման: :

Քանի որ այս տարի Հանրակրթական նոր չափորոշիչը ներդրվելու է բոլոր դպրոցներում , զարգացման միտումներից մեկն է լինելու ՀՊԶ-ի արդյունքների արդյունավետ ապահովումը:

Չարգացման ծրագրի նպատակները

- Ձևավորել ազատ հաղորդակցվող (այդ թվում օտար լեզվով), ստեղծագործ, քննադատող և վերլուծող անհատներ
- Նպաստել հավասար պայմանների և անվտանգ միջավայրի ապահովմանը կրթության տարբեր կարիքներ ունեցող սովորողների համար
- Չարգացնել թե՛ ուսուցիչների, թե՛ սովորողների ՏՀՏ գործիքներով և ռեսուրսներով աշխատելու հմտությունները, նպաստել գրագետ մեդիասպառողների ձևաբորմանը
- Բարելավել շենքային պայմաններն եւ նյութատեխնիկական բազան
- Նպաստել ուսուցիչների որակավորման բարձրացմանը
- Նպաստել բուլլինգից զերծ , անկաշկանդ դպրոցական միջավայրի առկայությանը
- Նպաստել սովորողների առաջադիմության բարձրացմանը

Նպատակներից բխող խնդիրներ

- Չարգացնել ներդպրոցական վերահսկողության մեխանիզմները
- Բարձրացնել սովորողների և մանկավարժների մոտիվացիան՝ տարբեր խրախուսման մեխանիզմներով
- Ապահովել լաբորատորիաներով և տեխնիկական հագեցվածությամբ
- Նպաստել սովորողների, մանկավարժների, ծնողների տարբեր գիտաժողովների, սեմինարների, վեբինարների մասնակցությանը:
- Հավասար պայմանների ապահովում

Չարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են նյութական և ոչ նյութական ռեսուրսներ: Դպրոցը պետք է ունենա վերանորոգված դասասենյակներ՝ համապատասխան գույքով, լաբորատորիաներ, ՆՁՊ կաբինետ, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, գրադարան, համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ, տեսցրիչներ: «»

ԴՉԾ-ի ակնկալվող վերջնարդյունքները

- Առաջադեմ, զարգացած, վերլուծող ու ստեղծագործ շրջանավարտներ
- Դպրոցի հաշվետվողականության բարձրացում
- Առաջադիմության բարձր մակարդակ
- Առաջադեմ , ստեղծագործ, շարունական և փոփոխությունն ընդունող ու իրագործող մանկավարժական համակազմ
- Բուլլինգի երևույթներ գրեթե բացակայություն
- Ժամանակակից պահանջներին համապատասխան շենքային պայմաններ և արդիականացված նյութատեխնիկական բազա
-

Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Դպրոցն իրականացնում է միջնակարգ կրթություն՝ ունենալով լիցենզիայով սահմանված 800 սվորողների տեղ

Դպրոցը ապահովում է կրթական հետևյալ կարիքները

- ✓ Ձևավորել իրավագիտակից, հայրենասեր, պատասխանատու, ժողովրդավար, սեփական դիրքորոշում ունեցող, մասնագիտական կողմնորոշում և որոշակի կարողունակություններ ունեցող անհատների:

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

Կրթությունը սահմանվում է որպես անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար.

Երևանի Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ դպրոցը իրականացնում է պետության սահմանած կրթության քաղաքականությունը սովորողի՝ որպես սոցիալական անձ ձևավորելու, նրա մտավոր, հոգևոր և մասնագիտական զարգացման պահանջները ապահովելու համար:

Ամբողջական անվանումը՝ Երևանի Աշոտ Մանուկյանի անվան հ 93 միջնակարգ դպրոց


- Հասցեն՝ Երևան, Դավիթաշե, 5-րդ փողոց, 0054
- Հեռախոս՝ 010343183

- Դպրոցի էլեկտրոնային կայք՝ yerevan93.schoolsite.am
- Հիմնադրման տարի՝ 1939 թվական
- 1978 թվականին դպրոցը տեղափոխվել է նորակառույց մասնաշենք
- 1998 թվականին անվանակոչվել է դարեցի նախկին սան, «Սասունցի Դավիթ» ջոկատի հրամանատար, Արցախյան հերոսամարտի մասնակից Աշոտ Մանուկյանի անունով
- ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 01.24.2003թ-ին (գրանցման համար՝ 271.210.02474):
- Գործունեության ժամկետ՝ անժամկետ
- Դպրոցի մակերես՝ 11012.3 քմ
- Կաթսայատուն՝ 57.6 քմ
- Հողամասի մակերես՝ 2.1409 հա
- Դպրոցը միահերթ է, աշխատում է 5-օրյա աշխատանքային գրաֆիկով

1.Դպրոցի ներկա վիճակի վերլուծություն .

1.1 շենքային պայմաններ

Դպրոցն ունի 7 մասնաշենք, որից այս պահին գործում են 6-ը (1-ը տրված է բաղաբապետարանին՝ մանկապարտեզ կառուցելու նպատակով): Դպրոցն ունի դեպի դուրս բացվող պահուստային ելքեր՝ տարիանման պլան սխեմայով, ունի հակահրդեհային համակարգ՝ լիցքավորված կրակմարիչներով և վահանակով: Հաստատության կահույքը մասամբ համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պայմաններին: Մի մասը ամուր և բարվոք վիճակում է, մյուս մասը՝ ոչ այնքան: Ապահովված է մշտական հոսող ջրով: Հաստատությունն ունի ջեռուցման համակարգ՝ կաթսայատնով, ուսուցչանոց, ՆՁՊ կաբինետ, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, 9 սանհանգույց, նկուղ, պահոց. դպրոցում կա Ա. Մանուկյանի անվան անկյուն :



**6-րդ
մասնաշենք
երկհարկանի**



8 դասասենյակ



Գործում է միայն 2-րդ հարկը՝ 4 դասասենյակով

1-ին հարկը տրված է մասնավոր մանկապարտեզի:

Դպրոցն ի սկզբանե կառուցված է եղել 7 մասնաշենքով, սակայն 7-րդ մասնաշենքն այժմ վերակառուցվում է որպես համայնքի մանկապարտեզ:

Սանհանգույցները առաջին հարկերում են:

Շենքային պայմանների ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Համակարգչային կաբինետ՝ 16 համակարգիչներով (եռակոմպլեկտ սեղան-աթոռով): Սրանցից բացի՝ կան նաև 22 նոութբուքեր	Դպրոցում չկան բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն)լաբորատորիաներ, առկա չէ գույք:

<ul style="list-style-type: none"> ✓ Հանդիսությունների դահլիճ՝ համապատասխան գույքով, տեսացրիչով, ձայնարկիչներով ✓ Մարզադահլիճ՝ համապատասխան գույքով, հանդերձարաններով (դրանց վիճակը բավարար է) ✓ Մարզահրապարակ ✓ Գրադարան՝ շուրջ 9 հազար գրքերով 	<p>Դպրոցը չունի ԿԱՊԿՈԼ երեխաների համար առանձնացված սենյակ կամ ռեսուրս-կենտրոն</p> <ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցի 5-րդ մասնաշենքը ունի վերանորոգման կարիք
<ul style="list-style-type: none"> ✓ ՆՁՊ կաբինետ (առկա են 2 հրացաններ, որոնց համար պարբերաբար ձեռք են բերվում օդամիլիչ հրացանի փամփուշտներ) 	<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցի ջրահեռացման համակարգը լավ չի գործում, ինչի հետևանքով որոշ դասասենյակների պատերը խոնավանում են և լրացուցիչ խնդիրներ ստեղծում ձմռանը ջեռուցում ապահովելիս:
<ul style="list-style-type: none"> ✓ Բուժկետ՝ մասնակի գույքով 	<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցը ձմռանն ունենում է ամբողջական ջեռուցմամբ ապահովելու խնդիր: Սա կապված է դպրոցի մեծ մակերեսների և ֆինանսական ծախսերի հետ:
<ul style="list-style-type: none"> ✓ Հոգեբանի կաբինետ՝ նախատեսված նաև ԿԱՊԿՈԼ սովորողների համար 	<ul style="list-style-type: none"> ✓ Քանի որ դպրոցում ուսուցումը կաբինետային է , դպրոցն ունի առանձին հանդերձարան ունենալու կարիք:
<ul style="list-style-type: none"> ✓ Շախմատի դասասենյակ՝ կահավորված համապատասխան գույքով 	<ul style="list-style-type: none"> ✓ Դպրոցի բակը որոշ հատվածներում անբարեկարգ է, բարվոք վիճակում չեն դպրոցի դարպասները, բակի ետևամասն ունի բարեկարգման կարիք:

✓ Նկուղ, որը պատրաստվել է որպես ապաստարան	✓ Բուժետղ չի գործում
✓ Դպրոցի տանիքը հիմնանորոգված է	✓ Դպրոցի որոշ հողակտոր անմշակ է

1.2 Նյութատեխնիկական բազան

Դպրոցը համալրված է նութթուբերով, մշտական ինտերնետային կապով: Դպրոցն ունի անվտանգության համակարգ՝ տեսահսկող սարքերով, որոնք տեղադրված են մուտքերի մոտ, միջանցքներում և հսկվում է տնօրենի աշխատասենյակում տեղադրված էկրանի միջոցով:

Ուժեղ կողմեր

- ✓ Դպրոցն ապահովված է ինտերնետային կապով, համացանցն անխափան աշխատում է
- ✓ Դպրոցն ունի 22 նոութթուբեր և 16 համակարգիչներ: 1 համակարգիչ կա տնօրենի աշխատասենյակում, ևս 1-ը օպերատորի աշխատասենյակում է:
- ✓ Դպրոցն ունի 2 տպիչ սարքեր,
- ✓ 1 մեծ և 4 փոքր ձայնարկիչներ՝ իրենց բարձրախոսներով,
- ✓ դպրոցն ունի 6 տեսացրիչ:

Թույլ կողմեր

- ✓ Դպրոցի համակարգիչները բավականին հին են, դժվար է դրանցով աշխատելը (սովորողներն են նշում հանդիպման ժամանակ):
- ✓ Դպրոցը չունի էլեկտրոնային գրատախտակ, նորարական ինժինեռամաթեմատիկական լաբորատորիաներ:
- ✓ Տեսացրիչների քանակը քիչ է տվյալ սովորողների թվի հարաբերակցությամբ,
- ✓ դպրոցը չունի ժամանակակից գրատախտակներ:
- ✓ Դպրոցի անվտանգության համակարգի տեսախցիկների քանակը քիչ է:
- ✓ Դպրոցի ՆՁՊ կաբինետի գույքը թարմացման և համալրման կարիք ունի. մասնավորապես չկան կրակելու համար նախատեսված նշանառության պատվանդաններ, էլեկտրոնային հրաձգարան:
- ✓ Չկան էլեկտրոնային քարտեզներ:
- ✓ Չկան լուսային սարքեր, նյութատեխնիկական միջոցներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Դպրոցի կառավարման խորհուրդը օրքենքով սահմանված կարգով կատարել է իրեն վերապահված բոլոր լիազորությունները, առկա է արձանագրությունների մատյանը:

Կառավարման խորհուրդը

1. Գումարել է նիստեր սահմանված ժամանակահատվածում:
2. Իրականացրել է վերահսկողություն դպրոցի զարգացման ծրագրի կատարման գործում:
2. Հավանության է արժանացրել դպրոցի հաստիքացուցակը և տարիֆիկացիան, ծախսերի ամենամյա նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը:
3. Զննարկել և հավանության է արժանացրել դպրոցի ներքին կարգապահական կանոնները:
4. Հաստատել է ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը:
5. Զննարկել է դպրոցի ներքին գնահատման արդյունքները:

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցն ունի

- ✓ Կառավարման խորհուրդ
- ✓ Մանկավարժական խորհուրդ
- ✓ Առարկայական մեթոդիավորումներ
- ✓ Ծնողական խորհուրդ
- ✓ Աշակերտական խորհուրդ

Կոլեգիալ կառավարման խորհուրդը ունի հետևյալ կազմը՝

Կոլեգիալ կառավարման խորհուրդը կազմավորվել է կարգին համապատասխան, նիստերը վարվում են ժամանակացույցին համապատասխան, առկա է արձանագրությունների մատյանը:

Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ	Ծնողական խորհրդի ներկայացուցիչ	Երևանի քաղաքապետի ներկայացուցիչ		ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացուցիչ	
		Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը
Ղանդիլյան Գոհար Գագիկի	Խանդոյան Լիլիթ Վոլոդյայի	Խունդկարյան Անահիտ Վիլիկի	«Երևանի Դավթաշեն վարչական շրջանի թ. 40 գրադարան» ՀՈԱԿ, գրադարանավար	Միրզախանյան Լուսինե Սամվելի	«Երևանի Ա. Նավասարդյանի անվան հ. 196 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, հոգեբան

Գրիգորյան Տանյա Արարատի	Դաշտոյան Արթուր Նորայրի	Հարուբոյունյ ան Մարիամ Արտաշի	Երևանի Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազ մի իրավաբանա կան բաժնի առաջատար մասնագետ		
		Թևանյան Ալվարդ Չարզանդի	«Ստեփան Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, ազգային նվազարաններ ի բաժնի վարիչ		

Դպրոցի կառավարման խորհրդի կազմը ներկայացնում է տարբեր բնագավառներ, իրազեկ են , ըստ այդ՝ քննարկումնեին ստացվում է բազմակարծության ապահովում: Դպրոցի ԿԽ անդամները բարեկիրթ են, ունեն հարգալից վերաբերմունք միմյանց հանդեպ (եզրակացության հիմքը մեր գրույցներն են խորհրդի անդամներից մի քանիսի հետ):

Դպրոցի ԿԽ գործունեությունը ավելի թափանցիկ դարձնելու համար 2023-2028 թվականների ընթացքում նախատեսում ենք բոլոր արձանագրությունները վերբեռնել դպրոցի կայքէջ (այժմ դրանք բացակայում են), հետևողական լինել օրենսդրական նոր նորմերի ընդունման ու դրանց փոփոխության դեպքում խորհրդի անդամներին

իրագրելուն, համապատասխան վերապատրաստումներում(պետության կողմից կազմակերպվող) ընդգրկելուն :

2023-2028 թվականներին կառավարման խորհրդի հետ համագործակցության ապահովման նպատակով կշարունակենք կատարել օրենքով (2 փետրվարի 2023 թվականի N 137-Ն)¹ տնօրենի համար սահմանված կետերը, այն է՝

- խորհրդի քննարկմանը ներկայացնել ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը..

- խորհրդի հավանությանը ներկայացնել դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը:

- Մասնակցել խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:
- Նախարարության հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակել և խորհրդի հաստատմանը ներկայացնել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.

- Խրախուսել մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում, այդ թվում՝ կառավարման խորհրդում:

- Խորհրդի քննարկմանը ներկայացնել ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները:

Քանի որ կառավարման խորհրդի անդամներից ոմանք նաև մշակութային տարբեր ոլորտների ներկայացուցիչներ են, նրանց հետ կազմակերպել

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173741>,

նախագծեր, միջոցառումներ՝ ավելի մասնակցային և արդյունավետ համագործակցելու համար:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Իր լիազորությունների լիարժեք կատարում, այն է՝</p> <ul style="list-style-type: none"> • Վերահսկողություն տնօրենի զարգացման ծրագրի նկատմամբ • Դպրոցի ներքին կարգապահական նորմերի հաստատում • Դպրոցում սովորող ԿԱՊԿՈՒ սովորողների կազմի հաստատում • Դպրոցի տնօրենի հետ սերտ համագործակցություն • Նիստերի ժամանակին վարում ու արձանագրությունների ներկայացում 	<ul style="list-style-type: none"> • Նախաձեռնողականության պակաս • Մասնակցային գործունեության պակաս • Խորհրդի արձանագրությունները չկան դպրոցի կայքում, ինչը թափանցիկության պակասի մասին է վկայում:

1.4 Դպրոցի խորհրդակցական մարմիններ

Մանկավարժական խորհուրդ

Դպրոցի բոլոր մանկավարժները մանկավարժական խորհրդի անդամներ են:

Մանկավարժական խորհուրդը կատարում է օրենքով սահմանված իր լիազորությունները, այն է՝ քննարկել.

1.) հանրակրթության պետական չափորոշի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը

2) սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ եթե առկա է

ծնողի ստորագրած համաձայնագիրը, կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումը.

3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները.

4) ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, ուսումնական խմբակների, երկարօրյա խմբերի և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը.

5) ուսումնական հաստատությանը փորձաքննության տրամադրված կամ իր կողմից մշակված հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, դպրոցի ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր.

6) ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և հաշվետվությունը, դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը²

Մանկավարժական խորհուրդը հաստատում է՝

- 1) դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու,
- 2) սովորողների ընտրությամբ 10-12-րդ դասարաններում ուսումնական խմբերի ձևավորման,
- 3) սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու,
- 4) ավագ դպրոցի փոխադրական դասարաններում տարեվերջյան քննություններ սահմանելու,
- 5) սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու,
- 6) որևէ առարկան ուսումնասիրելուց ազատելու,
- 7) բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի,
- 8) սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու,
- 9) դպրոցի շրջանավարտներին հիմնական և միջնակարգ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու,
- 10) օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու,
- 11) դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնում է տնօրենին՝ հաստատման,
- 12) դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին:³

Մանկավարժական խորհուրդը գումարում է նիստեր՝ ըստ սահմանված կարգի՝ առնվազն 2 ամիսը մեկ անգամ.

1. 1) տնօրենի նախաձեռնությամբ.
- 2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.
- 3) լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են: Դրանց կարող են մասնակցել աշակերտական, ծնողական խորհրդի ներկայացուցիչներ (խորհրդակցական ձայնի իրավունքով):

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173741>, նույն տեղում:

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173741>, նույն տեղում

Մանկավարժական համակազմ

Իրավիճակի վերլուծություն

2022-2023 ուստարի

Աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 58

Վարչական աշխատողներ՝ 5

Մանկավարժներ (ուսուցիչներ)՝ 36

Մանկավարժական հաստիքային
անձնակազմ՝ 5

Դաստիարակ՝ 1

Ուսումնառության և սպասարկող
անձնակազմ՝ 10

Հաշվապահ՝ 1

Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ

Ցուցանիշներ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ, նվազում)
Ուսուցիչներ ընդհանուր թիվը	42	41	38	նվազում
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	21	22	25,5	նվազում


Ուսուցիչների կազմը՝ ըստ տարիքային բաշխվածության

55 և բարձր՝ 9

Մինչև 30 տարեկան՝ 2

30-40 տարեկան՝ 12

40-55 տարեկան՝ 13



Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն: Ուսուցիչներից 3-ը մասնակցել են կամավոր ատեստացիային և ստանում են հավելավճար.

Գրիգորյան Տանյա (հայոց լեզու և գրականություն)

Ղազարյան Քրիստինե (հայոց լեզու և գրականություն)

Գևորգյան Վիգեն (Ֆիզկուլտուրա):

Ուսուցիչներից 2-ն էլ ունեն 1-ին աստիճանի տարակարգ

Ղանդիլյան Գոհար (պատմություն)

Մուրադյան Փիրուզա (դասվար)

Ուսուցիչների միջև առողջ աշխատանքային հարաբերություններ են, ինչի մասին վկայում են փոխադարձ դասախոսումներն ու դրանց քննարկումները, փորձառու ուսուցիչների հետ մշակած դասապլաններն ու դրանց տրված հետադարձ կապերը:

2022-2023 թվականներին պարտադիր ատեստավորում են անցել ուսուցիչների 80%-ից ավելին:

Մնացած ուսուցիչներն էլ արդեն այս տարի ներկայացվել են պարտադիր ատեստավորման:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> ✓ Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ ✓ Բոլոր ուսուցիչներն աշխատում են իրենց մասնագիտությամբ ✓ Երիտասարդ և միջին տարիքի ուսուցիչների թվաքանակը գերակշռում է ✓ Տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ 	<ul style="list-style-type: none"> ✓ Ուսուցիչները ՏՀՏ գիտելիքների պակաս ունեն ✓ Տարակարգ ստացած ուսուցիչների քանակը քիչ է ✓ Մոտիվացիայի պակաս կա՝ կապված տարբեր հանգամանքների հետ ✓ Մասնակցությունը տարբեր միջազգային կրթական ծրագրերին ✓ Վերապատրաստող ուսուցիչների բացակայություն ✓ Օրենսդրության ոչ բավարար իմացություն

Առարկայական մեթոդիավորումներ

Առարկայական մեթոդիավորումները կատարում են հետևյալ աշխատանքները՝ կարգին համապատասխան քննարկում է՝

1. ՀԴԶ-ով սահմանված ուսումնական ծրագրերի, պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց վերաբերյալ ուսուցիչներին տալիս է երաշխավորություններ:
2. մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.
- 3) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.
- 4) կազմակերպում է դպրոցական առարկայական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ.
- 5) սահմանված կարգով մշակում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում քննական և ստուգողական առաջադրանքներ՝ առնվազն երեք տարբերակով, ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված անհատական առարկայական պլաններ, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցներ:⁴

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173741>, նույն տեղում

Առարկայական մեթոդիավորումների նիստերը վարվում են ամիսը առնվազն 1 անգամ և արձանագրվում են (զարգացման ծրագիր կազմելիս ուսումնասիրվել են դրանք):

Դպրոցում գոծում են հետևյալ **մեթոդիավորումները՝**

2023-2024 ուստարի

1. Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչները (ազգանուն-անուն)	Ժամաքանակ
Գրիգորյան Տանյա	24
Այդինյան Կարինե	28
Հայրապետյան Անուշ	29
Ղազարյան Քրիստինե	26

Օտար լեզուներ

Ուսուցիչները (ազգանուն-անուն)	Ժամաքանակ
Հակոբյան Վարվարա	30
Ղուկասյան Մարինե	29
Պողոսյան Լիլիթ	22
Բունիաթյան Աիդա	27
Պետրոսյան Էթերա	27
Սաֆարյան Հասմիկ	26
Հարությունյան Գոհար	22

Մաթեմատիկա և ինֆորմատիկա

Ուսուցիչները (ազգանուն-անուն)	Ժամաքանակ
Հախոյան Հասմիկ	7
Ստեփանյան Գայանե	8
Հայրապետյան Անուշ	35
Ղուկասյան Մարինե	35

Ներկայում դպրոցն ունի ինֆորմատիկայի ուսուցչի թափուր տեղ՝ 16 դասաժամով:

Ուսուցչի ազգանուն-անուն	Ժամաքանակ
Գրիգորյան	29
Գևորգյան	22
Սարունգոլյան	22

**Ֆիզկուլտուրա
և տեխնոլոգիա**

Պատմություն և աշխարհագրություն

Ուսուցիչները (ազգանուն-անուն)	Ժամաքանակ
Սիմոնյան Նարինե	20
Հարությունյն Նաիրա	28
Ղանդիլյան Գոհար	34
Սիմոնյան Նադյա	35


Դպրոցում առկա են ՆՁԴ-ի թափուր դասաժամեր, հայտարարվել է մրցույթ:

Տարրական դասարաններ


Ազգանուն-անուն	Ժամաքանակ
Փոքրիկյան Լաուրա	18
Մկրտչյան Հերմինե	22
Օհանյան Անահիտ	19
Ավագյան Թագուհի	24
Հայրապետյան Աննա	19
Անտոնյան Հասմիկ	27
Գեղամյան Արմինե	22
Դանիելյան Ալվարդ	25
Մուրադյան Փիրուզա	19
Մանուկյան Ասյա	18

Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն

Ուսուցիչները (ազգանուն-անուն)	Ժամաքանակ
Անտոնյան Շուշանիկ	27
Թամրազյան Անահիտ	23
Թոթոյան Անահիտ	30
Հովսեփյան Անի	26



Մեթոդափափորումները համակարգված և ժամանակին են կատարում իրենց պարտականությունները, բոլոր թեմատիկ պլանավորումները կազմվում են քննարկման, ընտրված միանման ձևաչափով, ՀԴԶ-ի նոր պահանջներին համապատասխան կազմվել են նաև 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների թեմատիկ պլանավորումները և ներկայացվել հաստատմանը, ստորին ներկայացված են համապատասխան լուսանկարներ. այստեղ մի հատված է նոր ՀԴԶ-ով կազմված թեմատիկ պլանավորումից. դրանք արվել են հեղինակների թույլտվությամբ:



Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Նիստերի կանոնադր վարում, համապատասխան արձանագրություններ	Սեմինարների կազմակերպման պակաս
Կազմում է ուսումնական պլաններ, առարկայական և ներքին գնահատման թեստեր	Ուսուցիչներին ատեստավորման պակաս
Կատարվում են փոխադարձ դասախոսումներ	Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և դրա ներդրմանը նպաստող գործողությունների պակաս
Իրականացնում են միմյանց օժանդակում	

Աշակերտական խորհուրդը ինքնակառավարման և իքնավարության լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որ կարող է հանդես գալ առաջարկություններով, հիմնել ներդպրոցական ակումբներ, իրականացնել միջոցառումներ. դպրոցի աշակերտական խորհրդի նախագահն իրավունք ունի մասնակցելու մանկավարժական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Դպրոցում կազմված է 6-12-րդ դասարանների սովորողներից:

Աշակերտական խորհրդի անդամները (ինչպես ցույց տվեց նաև ինձ հետ քննարկումը) մասնակցում են դպրոցի զանազան միջոցառումներին, հանդես են գալիս առաջարկներով, վեր են հանում իրենց հուզող հարցերը: Աշակերտական խորհրդի անդամները պարբերաբար հանդիպում, քննարկում են իրենց հուզող հարցերը, սակայն (մեր հանդիպման արդյունքում պարզվեց), որ նախաձեռնողականություն հանդես գրեթե չեն բերում: Իրենց նախաձեռնությամբ միջոցառումներ կամ ակցիաներ դեռ չեն իրականացրել:

Աշակերտներն ընտում են խորհրդի նախագահ , և նրանց ընտրելու իրավունքը կարևորելու, ապագայում ավելի օրենքների գիտակ և պետականամետ քաղաքացի ձևավորելու համար դպրոցի կառավարման 5 տարիների ընթացքում նախաձեռնում ենք կազմակերպել աշակերտական խորհրդի նախագահի ընտրություններ որքան հնարավոր է գործող ընտրական օրենքներին ու կարգերին համապատասխան:

Աշակերտական խորհուրդը ունի հետևյալ կազմը`

- Գրիգորյան Եվա
- Մխասյան Սուսաննա
- Մելքոնյան Մարի
- Չակոբյան Էմմա
- Չոունանյան Նարե
- Սարգսյան Մանե
- Ստեփանյան Սարգիս
- Չակոբյան Անի
- Գրիգորյան Միլենա
- Բաղդասարյան Արտակ
- Մանուկյան Թերեզա
- Խաչատրյան Նարե
- Խաչատրյան Լուսինե
- Կարապետյան Նունե
- Ներսիսյան Նելլի

Ուժեղ կողմեր	Թույլ կողեր
Աշակերտները համարձակ են, խելացի, անկաշկանդ կարծիքներ հնչեցնելու, ինդիքներ բարձրաձայնելու մեջ	Աշակերտական խորհուրդը նախաձեռնություններով գրեթե հանդես չի գալիս

Աշակերտները պատրաստակամ են Նախաձեռնություններով հանդես գալու	Միջոցառումներ սեփական Նախաձեռությամբ չի կատարում:
---	---

Դպրոցի ծնողական խորհուրդը`

1. իր կազմից առաջադրում և ընտրում է ծնողական խորհրդի անդամներ ու նախագահ
- 2 Աջակցում է դպրոցին ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնառության հարցերում:
3. Նպաստում է դպրոց-ծնող կապի ամրապնդմանը:
4. Ծնողներին ներգրավում է արտադպրոցական և ներդպրոցական աշխատանքներում:
5. Նպաստում է սոցիալապես անապահով երեխաներին աջակցություն ցուցաբերելուն
6. Օգնում է կրթության կազմակերպմանը:
7. Արձակուրդների ժամանակ օգնում է աշակերտների հանգստի ապահովմանը:

Ծնողական խորհուրդը կազմավորվում է բոլոր դասարանների ծնողական խորհուրդների ղեկավարներից և 2-3 անդամներից: Դպրոցը բաց է ծնողական խորհրդի հետ համագործակցության համար: Ծնող- դպրոց համագործակցության արդյունքում իրականացվել են մի շարք դպրոցական և արտադպրոցական միջոցառումներ (հագուստների ձեռքբերում, ճանապարհաձախսի փոխհատուցում): Դպրոցը խրախուսում է ծնողական համայնքի ներկայությունը դպրոցում, առկա խնդիրների բաց և ազատ քննարկումը, ինչպես նաև նախաձեռնություններն ու առաջարկները:

Ծնողական խորհուրդը կատարել և կատարում է կարգով սահմանված լիազորությունը:

Դպրոցի ծնողական խորհրդի կազմն ունի հետևյալ տեսքը`

- Խանոյան Լիլիթ
- Հակոբյան Մարիա
- Մնացականյան Քրիստինե
- Սարգսյան Հայկանուշ
- Գրիգորյան Լիլիթ
- Հակոբյան Մելանյա
- Գալստյան Անիտա
- Հովհաննիսյան Լիանա
- Ավետիսյա Անուշ
- Գրիգորյան Հռիփսիմե
- Գրիգորյան Արմինե
- Դաշտոյան Արթուր

Մանուկյան Արաքսյա
 Սարգսյան Հայկուհի
 Գրիգորյան Արմենուհի
 Չափարյան Մելինե
 Գրիգորյան Սաթենիկ
 Սարգսյան Հայկանուշ
 Հակոբյան Լիանա
 Կոստանյան Արմենուհի
 Առաքելյան Շուշան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի դասարանական և արտադասարանական միջոցառումների ակտիվ մասնակցություն	Սեմինարներ, խորհրդատվություն անելու նախաձեռնության պակաս
Ծնող-դպրոց ամուր կապ	Երբեմն պասիվ, չեզոք դիրքորոշում որոշ խնդիրների լուծման հարցում
Պատրաստակամություն՝ մասնակցելու զանազան միջոցառումների	

Չամագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցի գործունեության լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել տարբեր շահառու կազմակերպությունների հետ: Երևանի Ա. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոցը համագործակցում է ինչպես իր լիազոր մարմնի՝ Երևանի քաղաքապետարանի, այնպես էլ կրթության կառավարման լիազոր մարմնի՝ ԿԳՄՄ-ի հետ:

Դպրոցը սերտ համագործակցում է ԿՏԱԿ հիմնադրամի հետ: Մատենավարումը կատարվում է օնլայն, ուսուցիչները տիրապետում են էլեկտրոնային վարման կարգին:

Դպրոցի համագործակցում է նաև ԳԹԿ-ի հետ, կազմակերպում և ըստ կարգի անցկացնում է պետական ավարտական քննությունները:

Դպրոցը ակտիվորեն մասնակցում է քաղաքապետարանի կազմակերպած տարբեր միջոցառումներին, համայնքի կազմակերպած միջոցառումներին (օրինակ՝ դպրոցը մասնակցեց Դավիթաշեն վարչական շրջանի դեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի մայիսյան հաղթանակների առթիվ կազմակերպած քննարկմանը <https://www.facebook.com/DavtashenFB/posts/pfbid02hKzRLm4VPcK5VFsPnQzMZc4Tiv8ijHq1NC E3Bo54JtfTnzj64p7pXekthoPcHMOri>), քննարկում է հուզող խնդիրները ծնողական համայնքի հետ և ներկայացնում լիազոր մարմնին:

Դպրոցը համագործակցում է ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ, առաջնորդվում ԿԶՆԱԿ-ի էջում տեղադրված մի շարք կրթական նյութերով:

Դպրոցը համագործակցում է տարբեր վերապատրաստող կազմակերպությունների հետ՝ «Տաթև» գիտակրթական ընկերություն, «Ինտերակտիվ», «Լույս և ապագա» վերապատրաստող կազմակերպությունների հետ: Ուսուցիչները ազատորեն ընտրում են վերապատրաստող կազմակերպությունները և կրթական նորարարությունները բերում դպրոց:


Դպրոցի ուսուցիչները մասնակցում են «Edu Armenia», «Պարադիզմա» կրթական կառույցների կողմից կազմակերպված վերապատրաստումներին, դարձյալ կրթական նորարարությունները բերում դպրոց:

Դպրոցը համագործակցում է «Այբ» կրթական հիմնադրամի հետ, մասնակցում նրա կազմակերպած «Մեղու», «Կենդուրու», «Ռուսական արջուկ» մրցույթներին:

Դպրոցը համագործակցում է ԴՇՀ-ի հետ: Ուսուցիչներից մեկն ընդգրկված է դասագրքաստեղծման ծրագրի գնահատող հանձնաժողովում:

Դպրոցը բաց է տարբեր բուհերի հետ համագործակցության համար: Այստեղ պարբերաբեր տարբեր համալսարաններ ներկայացնում են իրենց կրթական ծրագրերը, իրազեկման ակցիաներ են իրականացնում:

Դպրոցը համագործակցում է Ավանի թ. 2 ՏՄԱԿ-ի հետ, ՀՄԿ-ի հետ: Դպրոցը սերտորեն համագործակցում է նաև համայնքի մյուս դպրոցների հետ : Այստեղ միայն կարելի է ավելի խորացնել համագործակցությունը և հանդես գալ միջդպրոցական միջոցառումներով, ինչը ներառված է մեր հինգամյա զարգացման ծրագրում:



Դավիթաշեն համայնքը Երևանի մարդաշատ և կայուն զարգացում ապրող համայնքներից է և շատ կարևոր է ոչ միայն մասնակցել համայնքում նախաձեռնած միջոցառումներին, այլև սեփական նախաձեռնություններով հանդես գալ ծնողական, աշակերտական և մանկավարժական խորհուրդների օգնությամբ: Մասնավորապես կատարել շատ նախագծային աշխատանքներ՝ ընդլայնված համայնքային մասշտաբներով: Կապը ուժեղացնելու համար պետք են հետևյալ քայլերը

1. Ծնողական խորհրդի դերի մեծացում , իրազեկման օրեր, ավելի ակտիվ և համագործակցող, խնդիրներ բարձրաձայնող և անտարբերությունից խույս տվող ծնողական համայնք
2. Աշակերտների դերի բարձրացում, նրանց մասնակցությունը իրենց առնչվող խնդիրների բարձրացմանը

3. Կառավարման խորհրդի անդամների ներուժի ճիշտ գնահատում և ուժերի օգտագործում՝ ի նպաստ դպրոցի և համայնքի:

4. Համայնքի պատմամշակութային ու հասարակակն վայրերի ավելի խորը և լայն ճանաչում ու դրանց բարեկարգման, պահպանման և խնդիրների լուծմանն ուղղված իրազեկման ու փոխօգնության միջոցառումներ համագործակցության շրջանակում:

5. Համագործակցող կառույցների հետ կապերի ընդլայնում, ինչպիսիք են ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակը, Ազգային գրադարանը, Կարմիր Խաչի Հայաստանի գրասենյակ և այլն:

6. Կամավոր լինելու արժևորում և կամավոր աշխատանքների խրախուսում, ինչի միջոցով ավելի կսերտանա համագործակցությունը շահառու խմբերի հետ:

7. Կրթության որակի վրա կարող է ազդել նաև համագործակցությունը համայնքի տնտեսվաող, արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ:

Համայնքում գործում է նաև թ. 40 գրադարանը, Ա. Տերտերյանի անվան արվեստի դպրոցը, որոնց հետ լայն համագործակցության ուղիներ կարելի է փնտրել:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցը ակտիվ համագործակցում է լիազոր մարմնի, մի շարք շահառու կազմակերպությունների հետ:	Ծնողական և աշակերտական խորհուրդների ի նախաձեռնողականության պակաս
Դպրոցը համագործակցում է համայնքի հետ:	Համայնքի տնտեսվարող, արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն:
Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի հետ:	Համայնքի հետ համագործակցության ոչ բավարար ծավալ
Աշակերտական խորհուրդը բարձաձայնում է խնդիրներ	Միջազգային այլ շահառու հանիսացող կրթական հարթակների և կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն

<p>Համայնքի մյուս դպրոցների հետ համագործակցություն</p>	<p>Կրթկան-մշակութային այլ կազմակերպությունների հետ համագործակցության պակաս:</p>
--	---

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն

Իրավիճակի վերլուծություն

Դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեից, լրացուցիչ եկամուտներ չունի:

Դպրոցի ֆինանսական ներհուսքերն ու արտահուսքերը 3 տարվա կտրվածքով ունի հետևյալ տեսքը՝

2021 թվական

Դրամական միջոցների ներհուսքեր.

(հազ. դրամ)

Եկամուտներ՝ 118289

Դրամական միջոցների արտահուսքեր՝

Աշխատավարձ՝ 106000.2

Էներգետիկ ծառ.՝ 7305.2

Կոմունալ ծառայություններ՝ 319.8

Կապի ծառ.՝ 72.5

Մասնագիտ. ծառ.՝ 800.0

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում՝ 209.0

Ընթացիկ վերանորոգում՝ 1103.5

Նյութեր (ապրանքներ)՝ 2273


Նպաստներ՝ 210.0

Պարտադիր վճարներ՝ 1188.8

Հիմնական միջոցների ձեռքբերում՝ 2650

Ազատ միջոցների օգտագործում՝ պարգևատրում՝ 9000

2021 թվականի եկամուտների եւ ծախսերի գրաֆիկ



2022 թվական

Դրամական միջոցների ներհոսքեր`

1. Սուբսիդիա` 122656.6
2. Դրամաշնորհ` 1329.7
 - 2.1 Պետության կողմից պատվիրակված ծախսերի փոխհատուցում` 1297.7
 - 2.2 այլ դրամաշնորհ` 50.0
3. Վարձակալություն` 80.5

Դրամական միջոցների արտահոսքեր

1. Աշխատավարձ` 111795.9
2. Էներգետիկ ծառայություններ` 8037
3. կոմունալ ծառայությունների վճարում` 447.1
4. Կապի ծառայություններ` 72.8
5. Մասնագիտական ծառայություններ` 850.0
6. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում` 325.0
7. Ընթացիկ վերանորոգում` 1015.0
8. Նյութեր` 2289.7


9. Նպաստներ՝ 50.0

10. Հարկային պարտավորություններ՝ 13.3

11. Պարտադիր վճարներ՝ 592.6

12. Հիմնական միջոցների ձեռքբերում՝ 2903.8

13. Տարեսկզբի դրամական միջոցների մնացորդի օգտագործում՝ պարզևատրում՝ 12000.0



2023 թվական

Դրամական միջոցների ներհույքեր

1. Սուբսիդիա՝ 123723

2. Այլ եկամուտներ՝ 6403

Դրամական միջոցների արտահոսքեր

1. Աշխատավարձ՝ 116930

2. Էներգետիկ ծառայություններ՝ 8901

3. Կոմունալ ծառայություններ՝ 334.2

4. Կապի ծառայություններ՝ 73.3

5. Մասնագիտական ծառայություններ՝ 800.0

6. Ընթացիկ վերանորոգում՝ 1133.3


7. Նյութեր՝ 2190.0

8. Պարտադիր վճարներ՝ 540.0

9. Հիմնական միջոցների ձեռքբերում՝ 2840.0

10. Տարեսկզբի դրամական միջոցների ազատ մնացորդի տնօրինում՝ 9000.0

11. Մնացորդ՝ 10539.2



Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Պետական բյուջեից ստացվող ֆինասական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները:	Դպրոցի զարգացման ծրագրերին ուղղված պետական ֆինանսական միջոցների անբավարար ծավալը
Վարձակալությունից ստացվող եկամուտ	Դպրոցի նախաձեռնությամբ ծավալած ստացված եկամուտների բացակայություն (օրինակ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ ծավալմամբ կամ նախագծերի օգնությամբ ստացվող եկամուտներ)
	Հովանավորների բացակայություն Լրացուցից վճարովի խմբակների բացակայություն: Ձեռուցման համակարգը նորացնելու և ընդլայնելու համար ոչ բավարար միջոցներ ժամանակակից լաբորատորիաներ ստեղծելու համար ոչ բավարար միջոցներ:

Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը և դրանց վարումը

Դպրոցն ունի ԿԳՄՍՆ կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան.

1. Պետական գրանցման վկայական
2. Դպրոցի կանոնադրություն
3. Լիցենզիա՝ ըստ կրթական աստիճանների
4. Դպրոցի զարգացման ծրագիր
5. Առարկայական ծրագրեր
6. Ներքին կարգապահական կանոններ
7. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանավորում
8. Հաշվետվություն դպրոցի ամենամյա գործունեության մասին
9. Դպրոցի շենքի սեփականության վկայական
10. Սովորողների շարժի մատյան
12. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
13. Աշխատողների հրամանագիրք
14. Աշակերտների հրամանագիրք
15. Աշխատողների անձնական գործեր
16. Դպրոցի մանկավարժական, առարկայական, մեթոդական միավորների, ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյաններում
17. Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ
18. Հաստիքացուցակ
19. Տարիֆիկացիոն ցուցակ
20. Ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի հաշվարկի մատյան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բոլոր փաստաթղթերի ժամանակին ու ճիշտ վարումը	Որոշ դեպքերում փաստաթղթերի էլեկտրոնային օրինակների բացակայություն

Կրթության որակը

1. Աշակերտական համակազմ

Իրավիճակի վերլուծություն

Ուսումնական հաստատությունն սովորողը ընդունվում է ծնողի (կամ նրա օրինական ներկայացուցչի) կողմից ներկայացված դիմումի և ուսումնական հաստատության ու ծնողի (կամ նրա օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա: Հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին: Հաստատությունում 2022-2023 ուստարում սովորել են 757 աշակերտներ:

